

# ՌՈՒԶԱՆ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԽՈՍԱԿԱՆ ԴԱՍԵՐԸ

«ԲԱԶՄԱՎԷՂՈՒՄ»

(1843-1863թթ.)

ԵՐԵՎԱՆ – 2015

Տպագրվում է Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի խորհրդի  
երաշխավորությամբ:

*Հետազոտության մեջ ներկայացվում է Վենետիկի Մխիթարյան միաբանության գլխավոր պարբերականի՝ «Բազմավեպի» առաջին համարներում (1843-1863թթ.) տպագրված այն նյութերը, որոնք վերաբերում են հայ իրականությանը, հայոց դպրոցին և մանկավարժական ու բարոյախոսական պատգամներ են՝ ուղղված բարձրացող սերնդին: Օգտակար է ավագ դպրոցի ուսուցիչների և հայ մանկավարժության պատմությամբ հետաքրքրվողների համար:*



Մանկավարժական գիտությունների թեկնածու Ռուզան Վիլիկի Դոլուխանյանն աշխատում է Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում որպես դոցենտ:

Ավարտել է Երևանի թիվ 114 անգլիական թեքումով դպրոցը, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի բանասիրական ֆակուլտետը: Թեկնածուական թեզի թեման է եղել՝ «Պատմավեպի ուսուցումը ավագ դպրոցում»: Գիտական ղեկավարը պատմավեպի ակնառու տեսաբան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սևակ Արզումանյանն էր:

Երկու մենագրությունների ու 16 գիտական հոդվածների հեղինակ է: Մասնակցել է հանրապետական և բուհական գիտաժողովների:

Մի քանի տարի եղել է Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ում գործող ավագ դպրոցի ուսուցիչների վերապատրաստման՝ հայոց լեզու և գրականություն առարկաների կոորդինատորը (համակարգողը):

Շուրջ 4 տարի մասնակցել է ԱՅՌԵՔՍ-ի վերապատրաստման դասընթացներին և ունի ուսուցիչ վերապատրաստողի հավաստագիր: Նախքան դասախոսական աշխատանքին անցնելն աշխատել է ՀՀ ԳԱԱ հրատարակչությունում և ապա Երևանի Արամայիս Երզնկյանի անվան N118 և Լևոն Շանթի անվան N4 դպրոցներում:

Տիրապետում է ռուսերենին և անգլերենին:

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մանկավարժությունը մարդկության պատմության մեջ ստեղծված հնագույն գիտաճյուղերից է: Սովորեցնելը, կրթելը գոյություն է ունեցել բոլոր հասարակարգերում՝ կախված տվյալ հասարակարգի զարգացման աստիճանից: Մանկավարժությունը սերտորեն կապված է բարոյագիտության հետ, որը ևս զարգացել է հասարակարգի առաջընթացին զուգահեռ:

Մանկավարժության, որպես գիտաճյուղի, հատուկ է համընդհանուր մոտեցումներ և ձևեր ունենալը և հատկանշական է, որ մանկավարժական որոշ հնագույն մեթոդներ չունեն ժամանակային սահմանափակում. դրանք եղել են անցյալում, նույնիսկ վաղնջական ժամանակներում, կան այսօր և կլինեն ապագայում:

Դրանցից առաջինը ուսուցիչ և աշակերտ փոխկապն է, որն իր ընդհանուր դրույթներով մշտական է բոլոր ժամանակների համար:

Մանկավարժական մշակված մեթոդներն ունեն փոխանցվելու հատկանիշ. դրանք առաջավոր ազգերից անցնում են կրթական ու մշակութային առավել ցածր մակարդակ ունեցող ժողովուրդներին՝ նրանց հաղորդակից դարձնելով մանկան, պատանու, տղայի և աղջկա կրթության ու դաստիարակության առավել կատարյալ մեթոդներին:

Մանկավարժության մեջ համընդհանուր է այն, որ բոլոր ազգերը կամենում են դեռ վաղ հասակից երեխայի մեջ սերմանել սեր դեպի հայրենիքը, իրեն շրջապատող մարդիկ, ծնողները և այլն:

Ուշ միջնադարի հանճարեղ մտածող, բանաստեղծ-աշուղ Սայաթ-Նովան խոհափիլիսոփայական խաղերից մեկում մարդուն այնպիսի պատգամներ է տալիս, որոնք այսօր էլ կարևոր են մանկավարժական ու բարոյախոսական դիտակետից.

Գի՛ր սիրե, դա՛լամ սիրե, դավթար սիրե:

Սա գրելու ու կարդալու մշտական հրահանգ է, որով մարդ արարածը պետք է կապվի գրքի հետ, յուրացնի նրանում եղած իմաստությունները: Խաղն ունի նաև բարոյախոսական խրատ՝ ըստ որի քրիստոնեական մարդասիրության համաձայն մարդը պիտի աղքատախնամ լինի, հյուրընկալ ու տարաշխարհիկ մարդկանց նկատմամբ ցուցաբերի սիրալիրություն.

Ա՛ղքատ սիրե, դո՛նաղ սիրե, տա՛ր սիրե:<sup>1</sup>

Այս հետազոտության մեջ, որն իր կտրվածքով նորություն է, «Ներածություն» բաժնում համառոտ խոսք կլինի հայ միջնադարյան մանկավարժական մտքի մի քանի դրսևորումների մասին, այնուհետև երկու գլուխների մեջ կդիտարկվեն քննության ենթակա այն մանկավարժական և բարոյախոսական խնդիրները, որոնք իրենց արտացոլումն են գտել «Բազմավեպ» հանդեսի առաջին 20 տարվա հատորներում և ուղղվել են համայն հայությանը:

Հարկ է նկատել, որ դրանց մի մասն այսօր էլ շարունակում է ունենալ արդիական նշանակություն.

*դոցենտ Ռուզան Դոլուխանյան*

---

<sup>1</sup> Սայաթ-Նովա, Հայերեն խաղեր, Վ.Հ.Զարգարյանի աշխատասիրությամբ, Երևան, 2013, էջ32:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ մանկավարժական մտքի գրավոր դրսևորումները մեր օրերն են հասել հինգերորդ դարից՝ Մեսրոպ Մաշտոցի գրերի գյուտից հետո:

Հայ միջնադարյան մատենագրության մեծագույն գիտակ Մանուկ Աբեղյանը ոսկեդարի առաջին հեղինակ Սահակ Պարթևի «Կանոնգիրք հայոց» մատյանում շեշտում է այն հատվածները, որոնք կապվում են մանկավարժության ու լուսավորության հետ. «Գրականության հիմնադիր կաթողիկոսը հենց առաջին կանոնի մեջ պատվիրում է լինել «ուսումնասէր»:<sup>2</sup> Սահակ Պարթևը «Կանոնք» աշխատության մեջ «Կարգ քահանայից առ ժողովրդականս և նոցին ժողովրդականաց հնազանդութիւն և կարգ ուղղութեան առ քահանայս» բաժնում քննադատում է այն քահանաներին, որոնք ամենօրյա կապի մեջ են ժողովրդի հետ և չեն մտածում իրենց կրթված լինելու ու գիտելիքներ ունենալու մասին: Հատկապես ցավալի է, որ նրանք ոչ միայն կրթված չեն, այլև հոգ չեն տանում իրենց որդիների կրթության համար, ուսման չեն տալիս նրանց. «...մանաւանդ վասն ուսումնատեցութեան, զի ասացին, թէ ինքեանք չեն ուսեալ և զորդիս իւրեանց ի դպրոց ոչ ունին և վասն տգիտութեան երիցութեան արժանի ոչ լինին»:<sup>3</sup>

Կաթողիկոսը խստորեն պահանջում է, որ քահանաներն իրենց միջից դուրս մղել լուսավորության թշնամուն ու որդիներին ուղարկեն դպրոցում սովորելու, որպեսզի գիտուն հոգեկորական դառնան, որովհետև ինչպես կուրությունն ատելի է մարմնին, այնպես էլ տգիտությունը վտանգավոր է հոգու համար ու ատելի է Աստծուն. «Արդ բարձէք այսուհետև ի ձենջ զայդպիսի թշնամանս, զորդիս ի դպրոց կալարուք, զի գիտունք լինիցին. ծաներու՛ք զի որպէս կուրութիւն աչաց ատելի է մարմնոյն, նոյնպէս և տգիտութիւն ոգոյ ատելի է Աստուծոյ, մանաւանդ քահանայից»:<sup>4</sup>

«Սովերք Հայկականք» ժողովածուում կա «Բանք իմաստասիրաց» բաժինը, որում հայ միջնադարի մարդկանց ուղղվում են խրատներ, որոնք դարավոր իմաստության արդյունք են:

Բերենք դրանցից մի քանիսը աշխարհաբար թարգմանությամբ՝

ա) Մտածելիս անցյալն օգտագործի՛ր ապագայի համար, որովհետև գիտության միջոցով չերևացողը կդառնա երևացող:

բ) Մի՛ մտածիր հեշտ բաների մասին, այլ այն մասին, ինչը ազնիվ է:

գ) Մարմնի համար ուժ է հարկավոր, իսկ խելքի համար օգտակար մտքերը:

դ) Իմաստունը հարցնում է, թե ո՞վ է ազնիվ խորհրդակիցը, պատասխանում են՝ ժամանակը:

<sup>2</sup> Մ.Աբեղյան, Երկեր, Գ, Երևան, 1968, էջ 135:

<sup>3</sup> Սահակ Պարթև, Կանոնք (տե՛ս «Սովերք Հայկական», Վենետիկ, 1853, էջ 88):

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 90:

ե) Բաբիոս իմաստասերն ասում է. «Պետք է ավարտը տեսնել ամեն գործ սկսելուց առաջ»:

զ) Դիողորոսն ասում է. «Իմաստուն խորհուրդը վեհագույնն է ավելի, քան հզորների ձեռքը»:

է) Պյութագորասն ասում է. «Ոչ երիվարն է երիվար առանց սանձի, ոչ իմաստությունն առանց գիտելիքների»:<sup>5</sup>

ը) Հարբաձների մոտ սթափների մասին, և անմիտների մոտ իմաստունների մասին չարժե խոսել:<sup>6</sup>

թ) Փիլիստոնն ասում է. «Իմաստությանն ավելի հոգ տար, քան ունեցվածքին, քանզի իմաստությամբ են ստեղծում ունեցվածքը, իսկ ունեցվածքով իմաստություն չեն ստանում»:<sup>7</sup>

Անտիկ աշխարհից եկող այս խրատներում կա մեկը, որը ներկայացնում է հմուտ ուսուցչի հետաքրքիր որոշումն իր երկու աշակերտների նկատմամբ: Իմաստասերն ուներ երկու աշակերտ: Նրանցից մեկն աշխատասեր էր, սակայն ընդունակություններ չունեց, իսկ մյուսն ընդունակ էր, բայց՝ ծույլ: Ուսուցիչը հրաժարվում է երկուսից էլ՝ պատճառաբանելով, թե մեկը կարողունակ է, սակայն չի կամենում, մյուսը ունակ չէ, բայց կամենում է:<sup>8</sup>

Հմուտ և լուսավորյալ մանկավարժ է եղել XI դարի նշանավոր պետական գործիչ, մատենագիր, թարգմանիչ, գիտնական Գրիգոր Մագիստրոսը, որը Հայոց կաթողիկոս Պետրոս Գետադարձին խնդրում է գիտական շրջանառության մեջ դնել VII դարի նշանավոր գիտնական, մանկավարժ Անանիա Շիրակացու գործերը: Գր. Մագիստրոսը ստեղծում է նոր տիպի դպրոց, որը համարձակություն էր հայ միջնադարի համար. «Գրիգոր Մագիստրոսն առանձնացնում է չորս գիտաճյուղեր՝ մաթեմատիկան, երաժշտությունը, երկրաչափությունը, աստղագիտությունը և ասում է, թե ինքը դեռևս պատանի հասակից հետամուտ է եղել արտաքին գիտությունների մեջ խորանալուն»:<sup>9</sup>

Ոսկեդարից սկսած հայ նշանավոր մատենագիրներին ծանոթ էր IV դարի վերջին և V դարի առաջին կեսին գրված «Գիրք Պիտոյից» կոչվող ճարտասանական ձեռնարկը, որը ողջ միջնադարում վերագրվում էր Մովսես Խորենացուն, որպես հունարենից կատարված փոխադրություն: Այդ գիրքը Ափթոնիոսին է վերագրվում հիմա, և կա այն կարծիքը, թե «Պիտոյից գիրքը» մինչև XVIII դարը որպես ճարտասանական ձեռնարկ օգտագործվել է Հայաստանի բարձրագույն դպրոցներում: Հետաքրքիր է ֆրանսիական հայագիտության հիմնադիր Սեն-Մարտենի կարծիքը «Գիրք Պիտոյիցի» մասին.

---

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 9-10:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 13:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 14:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 14-15:

<sup>9</sup> Ա. Դոլուխանյան, Վիկտոր Լանգլուան հայագետ, Երևան, 2003, էջ 37:

«Պիտոյից գրքի» հեղինակը խոր ծանոթություն է ցուցաբերում հունական գրականությանը, և այդ գիրքը շատ դժվար է հասկանալ. «Սա մի անսպառ գանձարան է բոլոր նրանց համար, ովքեր ուզում են խորանալ հայոց լեզվի նրբությունների մեջ»:<sup>10</sup> Ահա միջնադարի համար այս կարևոր գրքում առկա է. «Կրթութիւն է ամենայն ինչ» վերնագիրը:<sup>11</sup> Սա նշանակում է, թե հին քաղաքակիրթ աշխարհում նույնքան մեծ տեղ է տրվել կրթությանն, ինչպես այսօր:

Հայ միջնադարի մեծ մանկավարժներից է եղել XII դարի Հայոց կաթողիկոս, բանաստեղծ, երաժիշտ, գրիչ Ներսես Շնորհալին, որն իր «Վիպասանութիւն» քերթվածում խիստ ափսոսում է, թե արտասահմանում չի կարողացել ուսում ստանալ.

Ձի հրահանգից վարժարանի  
Չեմ տակաւին ներկուռ բանի:  
Յաթենականըն քաղաքի  
Չանձն իմաստիւք ոչ կըրթեցի,  
Ուր լըսարանըն Պղատոնի,  
Եւ չափ ոտիւք Հումերովնի,  
Ուր ստորոգողն Արիստոտել,  
Տասըն բանիւ գըրողն էի:<sup>12</sup>

Ներսես Շնորհալին գրել է նաև դիդակտիկ-ուսուցողական ոտանավորներ, որոնք հորինել է հայերենի այբբենակապով: Բանաստեղծի կարծիքով ուսում ստանալը ամեն քրիստոնյայի պարտականությունն է, այն աստվածահաճո գործ է, միաժամանակ շատ կարևոր ու կենսական է իրական կյանքում.

Եկ բեր, մանու՛կ, գունկն քո յիս,  
Լուր և անսա իմում բանիս...  
Միրեա՛ գուսումն, որով պատուիս  
Ի յերկնայնոցն և ի յերկրիս:<sup>13</sup>

Շնորհալին այբուբենի յուրաքանչյուր տառի համար ընտրում է մի խրատ, որն աշակերտին ուղղված իմաստուն հրահանգ է՝ հեշտ մտապահվող ու խիստ կիրառական ու հասկանալի.

Գիմըն գանձ է քեզ բիւր բարի,  
Գրելով զիմաստս ի տախտակի,  
Զնա արկ ի քոյդ պարանոցի,  
Որ պատուական է քան գոսկի:<sup>14</sup>

<sup>10</sup> Ա.Դուլուխանյան, Մեն-Մարտենը ֆրանսիական հայագիտության հիմնադիր, Երևան, 2014, էջ 119:

<sup>11</sup> Գիրք Պիտոյից, Աշխատասիրությամբ Գոհար Մուրադյանի, Երևան, 1993, էջ 57:

<sup>12</sup> «Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա», Երևան, 1979, էջ 120:

<sup>13</sup> Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, Վենետիկ, 1928, էջ 378-379:

Հայ միջնադարի գրական արժեքների մեջ կա ուշագրավ մի նմուշ, որը պատկերում է միջնադարյան դպրոցի սովերոտ կողմերը: Ոտանավորի հեղինակը XVIII դարի անձ է, կամ ձեռագրում քերթվածը XVIII դարի արտագրություն է: Այդ սրամիտ ոտանավորը հորինել է Հարություն անունով մեկը, որը բարեխղճորեն գրվածքի վերջում հայտնում է իր անունը՝ Հարություն: Ոտանավորի հայտնաբերողը ձեռագրից եղել է նշանավոր միջնադարագետ Ասատուր Մնացականյանը:

Ոտանավորը կոչվում է «Ֆալախա»: Ֆալախայի կամ փալախայի սպառիչ բացատրական Ստեփան Մալխասյանցի բառարանում. «Փալախա – 1. Թոկ՝ երկու ծայրը մի ձողի վրա ագուցված, որի մեջ մեկի գույգ ոտները կաշկանդելով վեր են բարձրացնում գավազանի հարվածներ տալու համար: Տեր Թողիկի դպրոցում փալախան միշտ կախ էր պատից: Վարպետը հրամայեց, փալախան բերին, ինձի փալախա զարկին, որ ծեծեց: 2. Փալախայով կաշկանդված ոտներին գավազանի հարվածներ տալը, փալախայով պատիծ: Դրան քսան փալախա տվեք: Շաբաթ օրերը բոլոր աշակերտներին անխտիր՝ մեղավոր, թե անմեղ, փալախա էին զարնում, և սա կոչվում էր հերթով փալախա»:<sup>15</sup>

Երկարամյա ուսուցողական աշխատանքի ժամանակ մենք դպրոցական աշակերտներին բացատրել ենք, թե ինչ էր Տեր Թողիկի դպրոցը, և ինչպես էր պատմում Պերճ Պռոշյանը Խաչատուր Աբովյանի և իր հանդիպումը, երբ սովորում էր միջնադարի պատիժները պարունակող դպրոցում, որոնք իսպառ վերացվեցին մեծ Լուսավորչի այցելությունից հետո: Ահա միջնադարյան դպրոցի պատժի էությունը պատկերող ոտանավորն այդ երևույթի պերճախոս վկայությունն է և արժե մեջբերել ամբողջությամբ.

### ՖԱԼԱԽԱՅ

Ես եմ փոքրիկ երեխա՛յ, երեխա՛յ,  
Զոտերս եղին ֆալախայ,  
Վասն այն ելեալ ես փախայ,  
Վա՛յ ինձի:

Յորժամ մտի վարժատուն, վարժատուն,  
Նայեցայ չորեք անկին,  
Տեսի ֆալախայն վեց կանգուն,  
Վա՛յ ինձի:

Յորժամ եղին ֆալախայ, ֆալախայ,  
Չի եղև միջնորդ և արխայ,  
Նա զիս ծեծէր անխնայ,  
Վա՛յ ինձի:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 370:

<sup>15</sup> Ստեփան Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. IV, Զ-Ֆ, Երևան, 2010, էջ 478:



Վա՛յ իմ գալու օրերուս, օրերուս,  
Դարման արէք ոտներուս,  
Արինաթափ զունկներուս,  
Վա՛յ ինձի:

Արդ ասացի վարդապետին, վարդապետին,  
Չեմ դիմանալ քո փայտին,  
Դաստա կապած ջըպոտին,  
Վա՛յ ինձի...

Արդ ասացի վարդապե՛տ, վարդապե՛տ,  
Այլ ոչ դառնամ դարձյալ յետ,  
Մնաս բարո՛վ այսուհետ,  
Վարդապետ:

Յորժամ հասայ ի մեր տուն, ի մեր տուն,  
Եօթն աւուր անկայ ի քուն,  
Չի մնացի ժամ մի արթուն  
Յարութիւն:<sup>16</sup>

Այս հետաքրքիր և ճանաչողական մեծ արժէք ունեցող ոտանավորը, ցավոք, դուրս է հանված հետազայում հրատարակված քրեստոմատիաներից:

Հայ միջնադարի դպրոցի պահանջները սպառիչ ձևով ներկայացրել են Մովսէս Խորենացին իր «Ողբում» և Անանիա Շիրակացին «Ինքնակենսագրականում»:  
Բերենք այդ երկու մեծ մտածողների պահանջը.

### **Մովսէս Խորենացի**

«Ուսուցիչները՝ տխմար ու ինքնահավան, իրենք իրենցից պատիվ գտած և ոչ աստծուց կոչված, փողով ընտրված և ոչ սուրբ հոգով. ոսկեսեր, նախանձոտ, թողած հեգությունը, որի մեջ աստված է բնակվում, և գայլ դարձած գիշատում են իրենց հոտերը:

...Աշակերտները՝ սովորելու մեջ ծուլ, սովորեցնելու մեջ փութաջան, որոնք դեռ չսովորած՝ աստվածաբան են»:<sup>17</sup>

---

<sup>16</sup> Հայ գրականության քրեստոմատիա, Միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի համար, Կազմեց Ա.Շ.Մնացականյանը, Երևան, 1970, էջ 203-204:

<sup>17</sup> Մովսէս Խորենացի, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, Երևան, 1981, էջ 451,453:

## Անանիա Շիրակացի

«Որովհետև, երբ ես վերադարձա, շատերը եկան ինձ մոտ սովորելու և փոքր-ինչ խելամտած թողեցին ինձ և հեռացան, չմնացին մինչև գիտության (դասընթացի) ավարտը: Առօրյա կարիքների համար նրանք բավական համարելով այն, ինչ ստացել են: Եվ ինձնից շատ շուտ առանձնանալով, սկսեցին ուսուցանել այնպիսի բաներ, որ չգիտեին, և իրենց ներկայացնել իբրև ուսուցիչներ, որոնց հասու չէին:

...Դարձյալ ոչ ոքի չեմ արգելել, ովքեր ցանկացել են սովորել և այսուհետև էլ չեմ արգելի: Եվ այս եմ առհավետ կտակում ձեզ՝ ինձնից հետո աշխարհ եկող ուսուցիչներիդ՝ իմաստություն և գիտություն սովորել ցանկացողներիդ»:<sup>18</sup> Մեր մեծերի պատգամները լիովին ծանոթ էին Մխիթարյան միաբանության ազգանվեր հոգևոր հայրերին, որոնք «Բազմավեպի» էջերում զարգացրին հայ ազգային մանկավարժական միտքն ու բարոյախոսական ավանդույթը՝ հարստացնելով այն XIX դարի եվրոպական առաջադեմ արժեքներով:

---

<sup>18</sup> Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա.Գ.Աբրահամյանի և Գ.Բ.Պետրոսյանի, Երևան, 1979, էջ 28-29:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԸ «ԲԱԶՄԱՎԷՊԻ» ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՐՆԵՐՈՒՄ

«Բազմավեպը» եղել է Վենետիկի Միսիթարյան միաբանության պարբերականը և անցել է դարավոր ուղի:<sup>19</sup> Այս պարբերականի հրատարակությունը հասել է մինչև մեր օրերը: Սկզբում՝ մինչև 1858 թվականը, «Բազմավեպը» երկշաբաթաթերթ էր, հետո դառնում է ամսագիր: Մեզ հետաքրքրողը «Բազմավեպի» առաջին քսան տարվա համարներն են. այն ընդգրկում է 1843-1863թթ. ժամանակահատվածը, որը և որոշել է հանդեսի հետագա ուղղվածությունը: «Բազմավեպի» առաջին խմբագիրը եղել է Գաբրիել Այվազովսկին՝ հանճարեղ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու եղբայրը: Նրան հաջորդել է Միսիթարյան միաբանության մեծագույն դեմքերից մեկը՝ Ղևոնդ Ալիշանը:

Միսիթարյանները՝ գրաբարի արթուն պահապանները, «Բազմավեպը» հրատարակել են արևմտահայ աշխարհաբարով՝ նպատակ ունենալով մեծացնել իրենց գրվածքների ընթերցողների քանակը:

«Բազմավեպի» առաջին քսան համարներում կան բազմաբնույթ հոդվածներ ու հրապարակումներ: Սակայն աչքի է զարնում մի նպատակ. «Բազմավեպը» կրթելու է հայ հասարակությանը:

1843 թվականի մայիսին լույս է տեսնում «Բազմավեպի» առաջին համարը, որը բացվում է «Յառաջաբան» հատվածով:

Առաջաբանում շեշտվում է քաղաքակիրթ Եվրոպայի վերջին երկու դարերի նպատակադրված առաջընթացը կրթության և մշակույթի բնագավառներում: Եվրոպան նախանձելի կերպով ավելացնում է իր դպրոցները, գրադարաններն ու գրախանութները, թանգարանները, գիտական հայտնագործումները: Այդպիսի առաջադիմությանը նպաստում են լրագրերն ու հանդեսները, որոնք իրենց հարուստ բովանդակությամբ կրթում են եվրոպացիներին:

Ուսումնասենչությունը Եվրոպայում տալիս է իր պտուղները: Եվրոպան դարձել է ընդօրինակման հիանալի նախատիպ, որի կրթական, մշակութային ու գիտական ուղիով իրենց ընթացքն են կազմակերպում Արևելքի որոշ երկրներ ու ազգեր: Այդ առաջընթացի մեջ մտել են նաև հայերը. «Այվազովսկուն (խոսքը Գաբրիել Այվազովսկու մասին է – Ռ.Դ.) հայտնի էր նաև այն, որ արևմտյան քաղաքներում օրըստօրե նկատելի է դառնում հայ ուսանողների թիվը: Այդ ուսանողների շարքերում աչքի էին ընկնում առաջավոր մտածողների՝ Վոլտերի, Դիդրոյի, Ռուսսոյի եռանդուն ընթերցողները: Անուշադրության մատնել այդ ամենը անհնարին էր»:<sup>20</sup>

<sup>19</sup> Տե՛ս Մեսրոպ Ճանաշյան, «Բազմավեպի» առաջին հարյուրամյակը, «Գեղունի», Վենետիկ, 1947:

<sup>20</sup> Ա.Բ.Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ.2. Երևան, 1960, էջ 189:

Հայ ազգի մեջ արթնանում է հինավուրց ուսումնաստենչության գենը. «ուստի ուրախութեամբ կըտեսնենք, որ քանի կերթան կարդացողները կըշատնան, դպրատունները կըծաղկին, տպարանները կըբանին, գրոց լեզուն հասկըցողները կաւելանան, աշխարհաբառ մաքուր խօսողները կըշատնան ու տեղ-տեղ ուսումնական ընկերութիւններ ալ կըհաստատուին: Բայց մեր ազգին հիմակուան ուսումնասիրութեանը նայելով, խիստ քիչ օրագիր ունենալը՝ աւելի աչքի կըզարնէ»:<sup>21</sup>

Ահա այս ամենը իմանալով՝ Մխիթարյան հայերը որոշեցին պարզ ու զվարճալի ոճով իրենց ազգին բացատրել, թե Եվրոպայում որքան առաջ են գնացել ուսումն ու կրթությունը, որքան են շատացել տեղեկությունները աշխարհի այլևայլ վայրերի և նրանց բնակիչների մասին, որքան է զարգացել որոշ երկրների տնտեսությունը և ինչպես են առաջավոր ազգերը հետևում իրենց կրթությանն ու առողջությանը:

«Բազմավէպի» առաջատար գծերից մեկն էլ դառնում է ընթերցողի մեջ հայրենասիրական զգացմունքն ուժեղացնելը: Դրա լավագույն օրինակը տալիս էր Իտալիայի ազգային ոգու հզոր զարթոնքը. «Նույն այդ ժամանակ նոր վերելքի օրեր էր ապրում իտալական գրականությունը: Բանաստեղծները ներբողներ էին ձնում Իտալիայի ազատության համար մարտնչող գործիչներին: Բոլոր թատրոններում բեմադրվում էին հայրենասիրական պիեսներ: Երաժշտության վարպետները կերտում էին նոր երգեր: Պատմաբանները ուսումնասիրում էին ժողովրդի կյանքն ու առօրյան, հերոսական անցյալն ու նվիրական ավանդությունները»:<sup>22</sup>

«Բազմավէպի» առաջին հատորներում իր ուրույն տեղն ունի «Դաստիարակութիւն» խորագիրն ունեցող բաժինը:

Քանի որ պարբերականը հոգևոր հայրերի նախաձեռնությամբ էր լույս աշխարհ գալիս, ապա կրթության խնդիրների տեսական ու կրթական ցուցումներն ու պատգամներն ուղղվում են իրենց գերակշիռ մասով տղաներին: «Տղոց կրթութեանը համար հարկաւոր գիտելիքներ» հոդվածում կան շատ ուշագրավ դիտարկումներ, որոնք կօգնեն նաև այսօրվա ուսուցիչներին ու դաստիարակներին:

Ուսման և դաստիարակության վերջնական նպատակը մարդու կատարելագործումն է: Թե ուսուցիչը և թե ծնողը պիտի իմանան, որ իրենք երեխային ոչ հիշողություն, ոչ երևակայություն և ոչ էլ դատողություն պիտի տան: Երեխան իր գենետիկայով դրանք արդեն ժառանգել է: Ծնողի և ուսուցչի դերն այն է, որ նրանք երեխայի մեջ եղած վերոհիշյալ գծերը սրեն ու կարգի բերեն:

Ուսուցչի համար դժվար է անընդունակ երեխային ընդունակ դարձնել, և սա ծնողների սխալ կարծիքն է, ինչպես նաև խիստ թերի է այն ուսուցիչների պատկերացումը, թե ընդունակ երեխան նույն կետի վրա է մնում և առաջ չի գնում:

<sup>21</sup> «Բազմավէպ», Օրագիր բնական, տնտեսական եւ բանասիրական գիտելեաց, 1, Վենետիկ, 1843, էջ 3-4:

<sup>22</sup> Ա.Բ.Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ.2, էջ 192:

Ուսուցիչը պետք է պարզի, թե տվյալ աշակերտը ինչ մտային կարողություններ ունի, որոնք կարելի է զարգացնել ու կենտրոնանա դրանց վրա:

Մարդ արարածը, եթե անգամ իմաստուն է ու խելացի, կարող է երբեմն սխալվել, ունենալ ոչ ընդունելի գաղափարներ: Ուսուցչի ջանքերով աշակերտների սխալներն ուղղվում են:

Հողվածում իրավացիորեն պահանջ է դրվում ընդհանուր կրթական համակարգ սահմանելուց առաջ հիշել, որ տարբեր աշակերտներ ունեն տարբեր ընդունակություններ, և նրանց նկատմամբ նույնական պահանջները կարող են դառնալ ոչ օգտակար:

Հարց է դրվում տեսական կրթության հետ ուժեղացնել դիդակտիկ-ուսուցողականը՝ հատկապես բացատրվող դասի ժամանակ զննական առարկաների ցանկալի առկայությունը, որով դասն ավելի հետաքրքիր ու անմոռաց կդառնա:

Եթե աշակերտն անցնում է աշխարհագրություն, կենդանաբանություն, բուսաբանություն, հանքաբանություն և նմանատիպ առարկաներ, ապա դասարանում ցուցադրվում են կենդանիների, բույսերի մեծադիր նկար-պլակատները, ներկայացվում են նաև հանքաբանական նյութերի նմուշները: Այս դեպքում աշակերտի միտքը չի հոգնի վերացական բացատրությունից, որովհետև դիտողականը կօգնի չլարել հիշողությունը:

Աշխարհագրության ժամանակ, երբ անցնում են աշխարհի նշանավորագույն քաղաքները, ապա այդ բնակավայրի կարևոր նկարները պետք է աշակերտը տեսնի: Քաղաքի մասին գիտելիքն առավել կամրապնդվի, եթե աշակերտն իմանա, թե այդ քաղաքում ինչ երևելի մարդիկ են ծնվել ու վախճանվել: Եթե անցնում են որևէ երկրի պատմություն, աշակերտը պետք է տեսնի այդ երկրի երևելի թագավորների նկարները կամ արձանները, այս ձևով աշակերտը դասը շուտ կյուրացնի ու երբեք չի մոռանա, թագավորի նկարը նրան կհիշեցնի իր դասը, և դա կդառնա մնայուն գիտելիք:

Եթե ես այսօր լինեի աշխարհագրության ուսուցիչ, ապա համակարգչի միջոցով դասի ժամանակ կմիացնեի «English club» ավիքը, որը 15-20 րոպեանոց ֆիլմեր է ցուցադրում աշխարհի նշանավոր քաղաքների ու տեսարժան վայրերի վերաբերյալ: Աշակերտը կշահեր երկու առումով. նախ կտեսներ քաղաքը, և երկրորդ՝ հանրամատչելի անգլերենով բացատրությունը կբարելավեր այդ լեզվի իմացությունը:

Երբ ուսուցանվում է որևէ երկրի պատմություն, ապա հիշվում են տվյալ երկրի նվաճումները, որոնք գովեստի են արժանի և թվարկվում են այն թերացումները, որոնք վնասել են երկրին ու մարդկությանը:

Որևէ երկրի պատմություն մտապահվում է, երբ այն ներկայացվում է կենդանի ձևով. նկարագրվում են այդ երկրի զարմանալի օրենքներն ու ծիծաղելի սովորությունները, երկրում եղած մեծամեծ պատերազմները, հայտնի բռնակալների ահավոր անգթությունները, դիվանագետ ու հմուտ թագավորների արդար վճիռները, -

այս բոլորը կգարգացնեն աշակերտի աշխարհայացքը, կհարստացնեն գիտելիքները, մտապահել կտան առարկան:

Հայտնի է, թե նորածինի մայրական կաթը որքան օգտակար է երեխայի համար, նույնքան ճշմարիտ է, որ երեխան կրթվի գիտելիքներ ու մանկավարժական հմտություններ ունեցող ուսուցչի մոտ:

Ոչ բոլոր ուսուցիչներն են պիտանի կրթելու և ուսուցանելու համար: Ծնողը նախապես պիտի գիտենա, թե ինչ ուսուցչի մոտ է սովորելու իր երեխան կամ ինչ տեսակ դպրոց է հաճախելու: Միայն գրել կարողալ իմացող անձը չի կարող ուսուցիչ լինել: Ուսուցչի առջև դրվում են բարդ խնդիրներ: Ոչ բոլորն իրավունք ունեն ուսուցիչ աշխատելու: Կան ուսուցիչներ, որ տարրական չափերով իրենց անելիքը չգիտեն: Ուսուցիչը առանց սեփական մեթոդի չի կարող ուսման մեջ ցանկալի արդյունքի հասնել:

Կան ուսուցիչներ, որ աշխատում են գիշեր-ցերեկ, սակայն ցանկալի արդյունքի չեն հասնում. «Վասն զի շատ վարժապետներ չեն գիտեր սորվեցրնելու ոճը կամ կերպը, որ յունական բառով **մեթոս** կըսուի»:<sup>23</sup> Եթե ուսուցիչը ճիշտ մեթոդ է կիրառում, ապա աշակերտները կխանդավառվեն ու եռանդուն ձևով կսովորեն: Իսկ եթե ուսուցիչը չունի անհրաժեշտ մեթոդը, ապա արդյունքը կլինի ցավալի. աշակերտները կձանձրանան, և ուսումը նրանց համար կդառնա աստելի:

«Բազմավեպում» ամենատարբեր առիթներով շեշտվում է, թե ճշմարիտ ուսուցչի համար ուսումն ու կրթությունը միահյուսված են. «Աս ըսածներես կըհետևի թե որ և իցե առաջին կարգի դպրատան վարժապետին պարտքն է տղոց միտքը, բարքը և մարմինը աղեկ կրթել. մեկ խօսքով, վարժապետ ըսածդ պիտի ըլլայ ոչ միայն ուսուցիչ, հապա նաև դաստիարակ»:<sup>24</sup>

Այս պահանջը արդիական է նաև այսօր, որովհետև գիտելիքներ սովորելուց բացի ուսուցիչը պետք է նաև դաստիարակի աշակերտին, նպաստի նրա հասարակական դիրքի ճիշտ կողմնորոշմանը, մարդկային հարաբերություններում առաքինի լինելու ջանք գործադրելուն:

«Բազմավեպում» իրավացիորեն ազգային դպրոցի առջև դրվում է հրամայական պահանջ. «Ազգին յատուկ կրթութիւն տուողն պետք է ազգային ըլլայ»:<sup>25</sup>

Այս պարբերականի լույս աշխարհ գալու առաջին տարիներին Հայաստանը չուներ պետականություն, հայ ժողովրդի արևմտյան զանգվածը Թուրքիայի իշխանության ներքո չէր կարող ունենալ այն կրթական առաջընթացը, ինչը ցանկալի էր ու կարևոր: Մխիթարյան միաբանությունը Վենետիկի Սուրբ Ղազար կղզուց իր վրա էր վերցրել ազգը կրթելու սրբազան առաքելությունը: Չմոռանանք, որ Խաչատուր Աբովյա-

<sup>23</sup> «Բազմավեպ», թիվ 2, Վենետիկ, 1844, էջ 25:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 25:

<sup>25</sup> «Բազմավեպ», թիվ 3, Վենետիկ, 1849, էջ 33:

նը՝ հայ մեծ Լուսավորիչը, նախքան Դորպատի համալսարան մեկնելը, երագում էր, սովորել Վենետիկի Մխիթարյան հայրերի մոտ:

«Բազմավեպի» «Ազգային դաստիարակություն» հոդվածը հետաքրքիր հրահանգ է XIX դարի երկրորդ կեսի հայ մտավոր գործիչներին լրջորեն ու արմատական ձևով անդրադառնալու սեփական ազգի կրթական խնդիրներին:

XIX դարի երկրորդ կեսին Հայաստանում չկային բարձրագույն դպրոցներ, առանց որոնց հնարավոր չէ իրականացնել որևէ ազգի առաջընթաց: Ամեն ազգ կրթական առաջընթաց կարող է ունենալ, եթե բարձրագույն դպրոցի ուսուցիչներն այն իրականացնեն ազգային լեզվով և ազգի գիտնականներով:

Հոդվածում հարց է դրվում: Ո՞վ կարող է ընդունել, որ ֆրանսիացին կրթի ռուսին, ռուսը գերմանացուն, գերմանացին իտալացուն, իտալացին ֆրանսիացուն կամ անգլիացուն: Ամեն ազգ ունի իր խնդիրներն ու առաջին հերթին իր ազգային բնավորությունը: Ազգային գիտնական ուսուցիչն ունի ազգային ոգի: Այդ ազգային ոգին է, որ գիտակցված ձևով պահպանում է ազգային լեզուն, ազգային ծեսը, ազգային ավանդույթները, նաև արևելքի բնակչին հատուկ որոշ բնավորության գծերը:

Եվրոպացիներն, անշուշտ, մեկը մյուսից, այսինքն՝ մի ազգը մյուս ազգից սովորում է: Սակայն նրանց զարգացման հիմքը հենց իրենք են: Հայտնի է, որ եվրոպացի կրթված ազգերը՝ իտալացին, ֆրանսիացին, անգլիացին, գերմանացին, ռուսը միաժամանակ չկրթվեցին: Այդ ազգերը տարբեր ժամանակներում կրթվել են իրենց մեջ եղած խելացիների ձեռքով:

Հոդվածում հայերը քաղաքակրթված են համարվում դեռ 4000 տարի առաջ եղած ժամանակներում, ինչպես եվրոպական ազգերից իտալացիները: Իսկ մյուս վերոհիշյալ ազգերը 1400 տարի առաջ են կրթվել:

Հայերը թեպետ կորցրել են իրենց պետականությունը, սակայն այլ տերություններում հասել են մեծ հաջողությունների: Նրանք թեպետ հպատակ են եղել այլ ազգի, սակայն այլ երկրներում բարձրացել են իշխողների աստիճանի:

Հայերն Ասիայում դարեր ի վեր համարվել են ամենաբարեկիրթ ազգը,<sup>26</sup> բացի այդ նրանք եվրոպացիներին էլ մեծ ծառայություններ են մատուցել: Այս ամենը հաստատում է այն ճշմարտությունը, որ հայերը կարող են սեփական ուժով կազմակերպել իրենց կրթական առաջընթացը:

Հնարավոր չէ, որ որևէ օտար իր ողջ ջանքը դնի հայ ժողովրդին կրթելու, այդ կենսական խնդիրը կարող են լուծել միայն իրենք՝ հայերը: Օտարներից կարելի է վերցնել կրթության ձևեր, սակայն հայ ժողովրդի կրթության ջահակիրը պետք է լինի հայը:<sup>27</sup>

---

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 34:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 35:

Այս եզրահանգումից հետո հողվածագիրը հիշեցնում է հենց իրենց հայերի պատմական օրինակը: Հայերին կրթելու գործը իրենց ձեռքը վերցրին Գրիգոր Լուսավորիչն ու Տրդատ Մեծը, որոնք մեծ թվով հույն ու ասորի ուսուցիչներ բերեցին Հայաստան: Ամենից առաջ կրթեցին քրմերի որդիներին: Հայաստանի երկրորդ լուսավորիչը դարձավ Ներսես Մեծը, որը Հայաստանի մեջ բացեց հազարավոր դպրոցներ, որոնցում կրթեց հայ եպիսկոպոսների և ոչ օտարների ձեռքով: Գրիգոր Լուսավորչի ու Ներսես Մեծի գործը Հայաստանի քաղաքական անկումից հետո իրենց ձեռքը վերցրին Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը:

Նրանք երկուսով դարձան Հայաստանի երրորդ լուսավորիչները: Հայոց գրերի գյուտից հետո նրանք ընտիր երիտասարդներ ուղարկեցին քաղաքակիրթ աշխարհի երևելի քաղաքները՝ գիտության մեջ խորանալու, սակայն մինչև ուղարկելը նրանց տվեցին մարդկային ու ազգային կրթություն:

Հողվածում ներկայացվում է կրթական ու գիտական այն խթանը, որը հայ երիտասարդներին ոգևորեց խորանալու մարդկային իմացության այն գաղտնիքներում, որոնք կային հունական, ասորական ու քաղդեական հնագույն մատյաններում: Երբ ուսում ստացած աշակերտները վերադարձան, այլևս չկար Վռամշապուհ արքան, սակայն կային Սահակ Բագրատունին, Վահան Ամատունին, մի Մամիկոնյան, որոնք տեղ տվեցին Թարգմանիչներին, խրախուսեցին նրանց, որ դպրոցներ բացեն և նոր ուսուցիչներ պատրաստեն: Ահա ինչ է ասվում այս հողվածում: Բերում ենք արևելահայերեն փոխադրությամբ. «Մեր Թարգմանիչներից առաջ՝ 200 տարվա ընթացքում, հայերը երևելի հանճարեղ մարդիկ են ունեցել, թերևս այն թարգմանիչներից էլ բարձր, նրանցից ոմանց արձանները կանգնեցվել են Հռոմի և Բյուզանդիոնի մեջ, բայց ուր են այսօր նրանց փառքը, գրվածքները, նրանց անունները, որոնցից հազիվ մի երկուսին ենք լսել այն օտարներից, որոնք վկայում են, թե այդ ժամանակներում այդ հայերը պարծանք են եղել: Այսօր, սակայն, նրանք ոչ օտարների պարծանքն են, ոչ էլ հայերի, որովհետև նրանց չենք ճանաչում, հայ ազգին էլ օգուտ չեն տվել:

Այդպես էլ անցած դարերից մինչև մեր ժամանակները հայերի մեջ եղել են շատ հմուտ բժիշկներ, թարգմանիչներ, դեսպաններ, թե Արևելքում և թե Արևմուտքում: Ու՞ր են նրանց անունները Հայաստանում:<sup>28</sup>

Հայերի համար կարևոր է, որ գիտնական ուսուցիչները լինեն հայազգի, հայկական ոգու կրող: Եվ բերվում է նոր զարգացող ազգերի՝ հույների, օսմանցիների, եգիպտացիների ու Եվրոպայում ավելի ուշ կրթված ազգերի օրինակը, որոնք կրթության մեջ առաջնահերթը համարում են ազգայինը:

Այս հողվածին հետևում է դաստիարակչական առած-ասացվածքների մի շարք, որոնցից մի քանիսը բերում ենք ստորև՝ թարգմանաբար:

---

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 36:



1. Եթե գրագետ չես, գեթ գրագետներին սիրիր, եթե գիտուն չես, հարգիր գիտուններին:
2. Եթե արդարամիտ ու հավատարիմ մարդու անուն վաստակես, բոլորը քեզ կվստահեն, ինչ դժվարության էլ հանդիպես, գորեղ խոսքով կհաղթահարես:
3. Եթե հետևես կրքերիդ, կդառնաս քո առաջին թշնամին:
4. Ազգականներիդ ու բարեկամներիդ սիրալիր ընդունիր, հակառակ դեպքում, ավելի լավ է չընդունես:
5. Վստահիր այն մարդկանց, որոնք աչքի են ընկել իրենց արդյունավետ գործերով, հանճարով ու արդարամտությամբ:
6. Մարդուն երևելի են դարձնում ոչ ազնվատոհմությունը, ոչ հարստությունը և ոչ էլ բարձր պաշտոնները, այլ դրանք լավ ձևով օգտագոծելը:<sup>29</sup>

1850 թվականի թիվ 6-ում «Դաստիարակութիւն» խորագրի ներքո ներկայացվում է, թե ինչպես կարող ես ազգի կրթվածությանը նպաստել:

«Բազմավեպը» մի յուրօրինակ պայքար է մղում տգիտության դեմ՝ այն համարելով բոլոր չարիքների պատճառ:<sup>30</sup>

Ակամայից հիշում ես Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկի հետևյալ միտքը. «Եվ այս բոլոր չարիքները մարդու միտքն են մտնում անուսումնությունից: Կույրը զրկվում է արեգակի ճառագայթներից, իսկ տգիտությունը զրկվում է կատարյալ կյանքից: Լավ է աչքով կույր լինել, քան մտքով կույր: Ինչպես որ հոգին մեծ է մարմնից, այնպես էլ մտքի տեսողությունը մեծ է մարմնի տեսողությունից»:<sup>31</sup>

«Բազմավեպում» էլ հաստատորեն նշվում է, թե երկրի վրայից տգիտությունը վերացնելու և գիտությունը ծաղկեցնելու դեպքում, չարիքը կվերանա, և մարդկությունը կապրի հավիտենական երջանկության մեջ:<sup>32</sup>

Ոչ ոք գիտության մեջ չի կարող լիակատար կատարելության հասնել, սակայն կատարելության ձգտումը մարդուն պետք է ուղեկցի ողջ կյանքում: Իմաստուն մարդիկ գրքեր են գրել, կատարյալին հասնելու ուղիներն ի ցույց են դրել, սակայն, ցավոք, քչերն են ջանք թափում կարդալ ու հասկանալ նրանց գրածները:

Հասարակական կյանքում երբեմն շփոթ կա, որովհետև որոշ տգետներ ճարպկորեն գիտուն են իրենց հռչակում, և իսկական գիտունը մնում է ստվերում: Մինչդեռ իսկական ազգասերը պարտավոր է ջանադիր տարբերել տգետին գիտունից և տեղ տա այն մարդկանց, որոնք չունեն խոսքի ու գործի հակասություն:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 37:

<sup>30</sup> «Բազմավեպ», թիվ 6, Վենետիկ, 1850, էջ 81:

<sup>31</sup> Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Թարգմանությունը և ծանոթությունները Ե.Տեր-Մինայանի, Երևան, 1989, էջ 29:

<sup>32</sup> «Բազմավեպ», թիվ 6, 1850, էջ 81:

Կրթությունը հզոր միջոց է մարդու միտքը կատարելագործելու համար: Որքան մարդն ուզում է բան սովորել, այնքան նորանոր գիտելիքներ ձեռք կբերի կարդացած գրքերից:

Իր գիտելիքները հարստացնելու ճանապարհով մարդն իմանում է և մտապահում երևելի մարդկանց անունները, սովորում նրանց գործերը, հանգամանալի ծանոթանում սեփական երկրի պատմությանը, ճամփորդություններին, դիպվածներին, հասկանում բնության, տիեզերքի երևույթները:

Զարգացած, կրթված մարդուն դժվար է ենթարկեցնելը: Նույնը կարելի է ասել նաև ազգերի մասին: Բռնավորներ են եղել, որ ժողովրդին ընկճելու և խոնարհեցնելու համար արգելում էին գրքեր կարդալն ու սովորելը:

Որևէ երկրի հնագանդեցումը ժողովրդին անուսում դարձնելու միջոցով, շատ հին պատմություն ունի: Այդ մասին դեռ վկայում է Մովսես Խորենացին, պատմելով պարսից Շապուհ արքայի և Մերուժան Արծրունու նմանատիպ գործերը. «Ինչ գիրք որ գտնում էր այրում էր և հրամայում էր հունարեն գրագիտություն չսովորել, այլ պարսկերեն և ոչ ոք չհամարձակվի հունարեն խոսել կամ թարգմանել: Նա պատճառ էր բերում, որ հայերը ոչ մի ծանոթություն և բարեկամական հաղորդակցություն չունենան հույների հետ, բայց իրոք քրիստոնեական ուսումը խափանելու նպատակ ունենալով, որովհետև այդ ժամանակ դեռ հայերեն գիր ու գրագիտություն չկար, և եկեղեցու կարգը կատարվում էր հունարեն լեզվով»:<sup>33</sup>

Մխիթարյանները համոզված էին, որ ամեն երկրի կրթվածություն սկսվում է երկրի առաջնորդների լուսավորյալ լինելու իրողությունից ու շեշտում էին, թե Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարողները շարունակ կարդում են ու հոգ են տանում, որ դոնապաններն ու կոշիկ մաքրողներն էլ կարդան:<sup>34</sup>

Հրապարակման մեջ կա մի հետաքրքիր փաստ՝ կրթված լինելու օգտակարության և երբեմն կենսականորեն բացառիկության մասին:

Նապոլեոն Բոնապարտը 1812 թվականին շատ իտալացի երիտասարդների տարավ Ռուսաստան կռվելու: Սրանք քաջաբար կռվեցին, սակայն ցուրտն ու սովը շատերի մահվան պատճառ դարձան: Նրանց մեջ կային կրթվածներ, որոնք ռուս ազնվականներին բացատրեցին, թե կարող են նրանց զավակներին գրել-կարդալ սովորեցնել: Դրանով բավականին փող վաստակեցին և տարիներ անց, ի վերջո, վերադարձան հայրենիք:

Ֆրանսերենի ուսուցման համար օտարերկրացի ուսուցիչներ վարձելը խիստ ընդունված էր XIX դարի ռուս ազնվականության համար: Այդ մասին հետաքրքիր

---

<sup>33</sup> Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և մեկնաբանությունները Ստ.Մալխասյանի, Երևան, 1981, էջ 367:

<sup>34</sup> «Բազմավեպ», թիվ 3, Վենետիկ, 1860, էջ 100:

վկայություն ունի Ալեքսանդր Պուշկինը «Եվգենի Օնեգին» պոեմում, որն անվանել է «роман в стихах».

Служив отлично-благородно,  
Долгами жил его отец,  
Давал три бала ежегодно  
И промотался наконец.  
Судьба Евгения хранила:  
Сперва Madame за ним ходила,  
Потом Monsieur её сменил.  
Ребёнок был резов, но мил.  
Monsieur l'Abbé, француз убогий,  
Чтоб не измучилось дитя,  
Учил его всему шутя,  
Не докучал моралью строгой,  
Слегка за шалости бранил  
И в Летний сад гулять водил.<sup>35</sup>

«Բազմավէպում» ժամանակ առ ժամանակ դրվում են հանրագումարային առաջաբաններ, որոնցում դիտարկվում է անցյալ ընթացքը և ծրագրվում հետագա անելիքները. այդ ամենը նաև ընթերցողների կարծիքները հաշվի առնելու նպատակով: 1861 թվականի իննեստասներորդ հատորն իր առաջաբանում դիմելով ընթերցողին ասում է, թե երկար ու բազմավաստակ ճամփորդության մեկնողի նման վերջապես «Բազմավէպը» հասավ իր 18-րդ տարվա վերջը և առանց հոգնելու շարունակում է իր ընթացքը: Եվ ինչպես ճանապարհորդը մի պահ խորհում է իր անցածի մասին, այնպես էլ «Բազմավէպը» հետ է նայում իր անցած ուղուն:<sup>36</sup> Պարբերականի հրատարակիչները կամենում են իմանալ, թե ընթերցողներն ինչ փոփոխություններ կկամենային տեսնել նրանում:<sup>37</sup>

1861 թվականի փետրվարյան համարում «Բազմավէպը» դաստիարակության մեջ ներառում է նաև «Առողջութիւն» բաժինը՝ բնաբան դնելով հետևյալ իմաստախոսությունը. «Ո՛վ Աստվա՛ծ իմ, տուր ինձ առողջ միտս յառողջ մարմնի»:<sup>38</sup>

Այս բաժնում տրվում են խորհուրդներ, որոնք այսօր էլ կիրառելի են: Ամենից անհրաժեշտ դեղը յուրաքանչյուր մարդու համար ինքն իրեն առողջ պահել իմանալն է: Այս բաժնում տրվում են կարևորագույն խորհուրդներ ճիշտ սնվելու վերաբերյալ: Նշվում

<sup>35</sup> А.С.Пушкин, Евгений Онегин, Роман в стихах, Москва, 1981, с. 25.

<sup>36</sup> «Բազմավէպ», թիվ 19, Վենետիկ, 1861, էջ 11:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 12:

<sup>38</sup> «Բազմավէպ», թիվ 2, Վենետիկ, 1861, էջ 33:

է, թե ավելի շատ են շատակերության պատճառով մեռածները, քան նրանք, որոնք սպանվել են. «Մա ստամներով իր գերեզմանն է փորում»:<sup>39</sup>

Այսօր էլ ճիշտ սննդակարգի հմուտ մասնագետները նույնն են ասում, ինչ որ տեսնում ենք «Բազմավեպում»: Ամեն բոպե մարդը չպետք է ուտելիքը դրած բերանում ծամի, այլ անհրաժեշտ է սնվել սահմանված ժամերին, և երբ քաղցած ես: Քաղցը որոշ չափով հազեցնելուց հետո, այլևս չպետք է մտածել ուտելու մասին: Չպետք է երբեք ուտել հնացած միս, խմոր հաց, չհասած, խակ միրգ: Կարկանդակներն ու քաղցրավենիքները մարդու քիմքին հաճելի են, բայց ծանրացնում են ստամոքսը: Տարբեր կերակուրներ չի կարելի իրար խառնել: Անհրաժեշտ է ուտել քիչ, սակայն առողջարար ուտելիքներ:

Ալեքսանդր Մակեդոնացին ասում էր. «Երկու գերագանց խոհարար ունեմ՝ շարժմունքս (այսինքն՝ ֆիզիկական ակտիվությունը – Ռ.Դ.) և չափավորությունը»:<sup>40</sup>

Եթե մարդն ուզում է լավ մարսել կերածը, ապա չպետք է ուտի արագ ու հապճեպ: Ուտելուց անմիջապես հետո խորհուրդ չի տրվում քնել կամ կարդալ: Ուտելուց հետո անհրաժեշտ է չափավոր շարժվել:

Շատ կարևոր է հետևյալ զգուշացումը, որը վերաբերում է ուտելիքների պատրաստման ժամանակ մաքրություն պահպանելուն:

Ուտելիք եփելու կաթսաները պետք է մաքուր լինեն: Ամենից առողջարար ջուրը հոսող ջուրն է: Լավ կլինի ջուրը թարմ լինի և սառը, առանց համեմունքների աղբյուրի ջուր լինի և ոչ թե ջրհորի: Քրտնած ժամանակ ջուր չի կարելի խմել: Ամռանը ջրի մեջ մի քանի կաթիլ քացախ կամ լիմոն խառնիր: Գինի քիչ գործածիր:

Քրտնած ժամանակ ջուր խմելու վնասակարության մասին խիստ տպավորիչ ձևով պատմում է Ղազարոս Աղայանը իր հիասքանչ «Անահիտ» հեքիաթում. «Մեկ օր իրանց սովորական որսորդության ժամանակ՝ Վաչագանն ու Վաղինակը հասան մի գյուղ և նստեցին նրա աղբյուրի մոտ, որ հանգստանան: Շատ դադրած ու քրտնած էին: Գյուղի աղջկերքը եկել էին աղբյուրից ջուր տանելու և հերթով լցնում էին կուժերն ու փարչերը: Վաչագանը սաստիկ ծարավել էր: Նա ջուր ուզեց, և աղջիկներից մինը լցրեց փարչը և ուզեց Վաչագանին տալ, բայց մի ուրիշ աղջիկ նրա ձեռքից խլեց փարչը և դատարկեց: Ինքը նորից լցրեց, բայց էլի դատարկեց: Վաչագանի թուրքը ցամաքել էր, և անհամբեր սպասում էր, թե երբ պետք է արդյոք նրան ջուր հասցնեն, բայց մեր անձանոթ աղջկա հոգը չէր այդ, նա կարծես խաղ էր անում, լցնում դատարկում էր և այդ կրկնեց չորս հինգ անգամ, միայն վեցերորդ անգամին տարավ իրան անձանոթ որսորդին տվավ:

Վաչագանը երբ որ խմեց և փարչը տվավ Վաղինակին, ինքն սկսեց խոսեցնել աղջկանը և հարցրեց, թե ինչու՞ նա իսկույն չբերավ ջուրը. չլինի՞ թե կատակ անել ուզեց կամ բարկացնել: Աղջիկը նրան պատասխանեց.

---

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 35:

<sup>40</sup> Նույն տեղում:

-Մենք սովորություն չունինք մի օտար երիտասարդի հետ կատակ անել, մանավանդ երբ նա ջուր է ուզում: Բայց ահա՛ ինչ էր իմ միտքը: Ես տեսա, որ դուք դադրած ու քրտնած եք, իսկ այդ վիճակի մեջ սատր ջուրը վնաս է մարդուն, դրա համար ես գիտությամբ ուշացրի, մինչև դուք մի փոքր հանգստանաք և հովանաք»:<sup>41</sup>

«Թե որքան կարևոր է մաքուր աղբյուրի ջուրը այդ մասին մարդ արածը գիտի վաղնջական ժամանակներից: Գուցե հենց ջրի կենսական բացառիկ արժեքը գիտակցելով մեր նախնիներն անհիշելի ժամանակներից ապրում են Հայկական լեռնաշխարհում, որը հարուստ է լեռնային աղբյուրներով, ի տարբերություն շատ երկրների, որոնք պլաստմասե շշերով ջուր են ներկրում այլ երկրներից: Պետք է հիանալի գիտակցենք մեր երկրի առավելությունը, որն ունեն նաև այսօրվա փոքրացած Հայաստանն ու Արցախը:

«Բազմավեպի» հողվածը մեզ հուշեց ներկայացնելու Հռոմի հռչակավոր «Թռեվի» շատրվանի ստեղծման պատմությունը, որը ներկայացնում ենք մեր կարդացած անգլերենով, նաև նույնի հայերեն թարգմանությամբ.

### **The Fountain of Trevi**

Italy is the great country of fountains, and the fountains of Rome, is one of the most magnificent in the city. It was built in the time of Pope Clement the Twelfth<sup>42</sup> about the middle of the eighteenth century.

The water is brought underground from a spring many miles outside the city. Tradition tells us that Agrippa's soldiers, marching along the dusty road, met a young girl carrying water from a spring. The water was so good and pure that Agrippa<sup>43</sup> decided to build an aqueduct to carry the water to Rome. The spring still flows, after nearly two thousand years, and supplies Rome with pure water from the Fountain of Trevi.

...The Fountain of Trevi has fine sculpture: a statue of Neptune surrounded by numerous other figures, out of and over which the water flows to fill a great stone basin that surrounds the whole. There is a belief that if a visitor to Rome visits the fountain at midnight and drops a coin into the water, he will certainly return to Rome at some future time.<sup>44</sup>

### **Թռեվի շատրվանը**

Իտալիան մեծաքանակ շատրվանների երկիր է, և Հռոմի շատրվանները նշանավոր են աշխարհում: Հռոմի Թռեվի շատրվանը ամենաաքանչելին է քաղաքում. այն

---

<sup>41</sup> Ղ.Աղայան, Ընտիր երկեր, Երևան, 1956, էջ 108-109:

<sup>42</sup> Կլեմենտ Տասներկուերորդը պապ է եղել 1730-1740թթ.:

<sup>43</sup> Ագրիպա Մարկոս Վիպսանիոս-(63-12մ.թ.ա.) հռոմեացի զորավար, քաղաքական գործիչ:

<sup>44</sup> В.В. Вахмистров, Read and speak, Москва, 1973, с. 162-163.

կառուցված է պապ Կլեմենտ Տասներկուերորդի ժամանակ՝ մոտավորապես տասնութերորդ դարի կեսերին:

Ջուրը գետնի տակով բերվում է քաղաքից բազում մղոններ հեռու գտնվող աղբյուրից: Ավանդությունը մեզ պատմում է. Ագրիպայի զինվորները փոշոտ ճանապարհով քայլելիս հանդիպում են աղբյուրից ջուր տանող ջահել աղջկա: Ջուրն այնքան լավն էր և մաքուր, որ Ագրիպան որոշում է ջրմուղ կառուցել՝ ջուրը Հռոմ տանելու համար: Դրանից հետո աղբյուրի ջուրը հոսում է համարյա երկու հազար տարի, ու Թռեվի շատրվանից Հռոմին ջուր է մատակարարում:

...Թռեվի շատրվանն ունի հիանալի ճարտարապետություն. Նեպտունի արձանը՝ շրջապատված բազմաթիվ այլ քանդակներով, որոնց վրայով կամ միջից ջուրը հորդում է քարե մեծ ավազանը՝ ամբողջը շրջափակող: Հավատալիք կա, եթե Հռոմ մեկնողը կեսգիշերին այցելի շատրվանը տեսնելու և մետաղադրամ նետի ջրի մեջ, անկասկած ապագայում Հռոմ կվերադառնա:

«Բազմավեպի» 1861-ի հատորներում կան Առակախոս Սերովբեի քերթվածներից: Դրանք բոլորն էլ ունեն կրթադաստիարակչական մեծ արժեք:

#### **Ընկույզի ծառի առակը<sup>45</sup>**

Եկեղեցու հրապարակում՝ ընկույզի ծառի տակ, երեկոյան ժամերին գյուղի տղաներին իր շուրջն էր հավաքում մի մարդ, որի զգեստներն անշուք էին, սակայն շատ կոկիկ, սպիտակեղենն այնքան մաքուր էր, թվում էր, թե հենց նոր են լվացքից հանել: «Այս ծառը, - ասում է նա, - ով տնկեց, շատ լավ գիտեր, որ ինքը չպիտի կարենա ծառի ոչ պտուղն ուտել, ոչ էլ շուքի տակ հանգստանալ: Բայց մտածեց իր որդիների և նրանց որդիների մասին: Ու հիմա մենք իր շնորհիվ այսքան պտուղ ունենք և արևի շողերից էլ պաստպարվում ենք: Ծերերը մեզ համար են աշխատել, մենք էլ մեզանից հետո եկողների համար լավ գործեր անենք:

Սերովբեի մեկ այլ առակում պատկերված է, թե ինչպես ճնճուկը կերակրում է անփետուր ձագերին, սակայն հայտնվում է ուրուրը և հափշտակում է մայր ճնճուկին: Թվում է, թե նորածին ու անօգնական ճնճուկները սովից սատկելու են: Հաջորդ օրը հայտնվում է մեկ ուրիշ ճնճուկ, որը կերակրում է ձագերին:

Այս առակի բարոյախոսական եզրակացության մեջ ասվում է. «Եթե Աստված կենդանիներին սովորեցրել է իրար սիրել ու պահպանել, մի՞ թե մարդիկ նույնը չպետք է անեն»:<sup>46</sup>

«Բազմավեպի» 1863-ի հատորում կա այն ճշգրիտ եզրահանգումը, թե երիտասարդությունը ամեն ազգի ապագան է, որի գործերի վրա հենվելու է առավել

---

<sup>45</sup> «Բազմավեպ», թիվ 19, Վենետիկ, 1861, էջ 19:

<sup>46</sup> Նույն տեղում, էջ 20:

կատարելագործված մարդը. «Տղայք ակնկալությիւնք են մարդկութեան, հիմն ապագային, յորոյ վրա շինուի և կատարելագործուի մարդս»:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### ԲԱՐՈՅԱԽՈՍԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ «ԲԱԶՄԱՎԷՊԻ» ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐՆԵՐՈՒՄ

Կրթությունն ու դաստիարակությունը վաղնջական ժամանակներից մշտական փոխկապվածություն ունեն: Կրթությունը դաստիարակության և բարոյական արժեքների հետևանք է:

«Բազմավեպը» բարոյախոսական հրահանգներ է տալիս այն ուսուցիչներին, որոնք ստանձնել են ապագայի մարդուն կերտելու դժվարին, երբեմն անշնորհակալ, սակայն կենսականորեն խիստ անհրաժեշտ գործը:

Պարբերականի 1851 թվականի թիվ 7-ում XIX դարակեսի բարոյական դաստիարակությունը բաղդատվում է Աստվածաշնչի Հին կտակարանում եղած բարոյախոսական պատգամների հետ: Սողոմոն Իմաստունի «Առակաց գրքում» ասվում է, թե որևէ ազգի պատժելու համար Աստված այդ ժողովրդից վերացնում է դաստիարակներին, որի հետևանքով ազգը խեղճանում և կործանվում է. «Ոչ գտցի առաջնորդ ազգի անօրինի»:<sup>47</sup>

Ըստ «Բազմավեպի»՝ ֆրանսիացիները համոզված են, թե մարդու երջանկության առաջին նախապայմանը ճիշտ դաստիարակությունն է:<sup>48</sup> Որևէ ազգ կանգուն պահելու, նրա ապագա ընթացքը ապահովելու, ազգը մշտապես նորոգ տեսնելու համար, ամենից առաջ նրանում պետք է դաստիարակել մարդուն:<sup>49</sup> Այսպիսի հարց է տրվում. «Ո՞վ ազատեց Ֆրանսիան երբեմնի խառնաշփոթ կոիվներից և Լյուդովիկոս Տասնչորսերորդի դարի փառավորությունը պատրաստեց: Դաստիարակության հրաշալի ուժը, որ XVII դարի առաջին քառասուն տարիներին տվեց Ֆրանսիացի երիտասարդությանը և չորս կողմից այնքան հրաշալի մարդիկ երևան հանեց»:<sup>50</sup>

Բոլոր հասարակություններում էլ, ցավոք, զգացվում է իսկական **Մարդու** պակասը, և ամենքը կարծես աղաղակում են, թե **Մարդ** չկա, ու՞ր է **Մարդը**: Հիշատակվում է հին Հունաստանի նշանավոր մտածող Դիոգենեսը, որն օրը ցերեկով լապտերը բռնած **Մարդ** էր որոնում:

Մարդու իսկական էությունը կա ժողովրդական դարավոր իմաստության մեջ, ուր բնութագրվում են մարդկային էությունները.

*Խելքի մարդ:*

*Զվարճությունների մարդ:*

<sup>47</sup> «Բազմավեպ», թիվ 7, Վենետիկ, 1851, էջ 98:

<sup>48</sup> Նույն տեղում:

<sup>49</sup> Նույն տեղում:

<sup>50</sup> Նույն տեղում, էջ 99:



*Փառասեր և ամբարտավան մարդ:*

*Անկարգ մարդ:*

*Անօրեն մարդ:*

*Պատվավոր մարդ:*

*Անխարդախ մարդ:*

*Հանճարեղ մարդ:*

*Գլուխ ունեցող մարդ:*

*Սիրտ ունեցող մարդ:*

*Քաջ մարդ:*

*Բարի մարդ:*

*Գիտուն մարդ:*

*Ընտրող մարդ:*

*Քաղաքագետ մարդ:*

*Դատաստանի մարդ:*

*Պատերազմասեր մարդ:*

*Գրոց մարդ և այլն, և այլն.<sup>51</sup>*

Երբ որևէ ազգ ընկնում է նեղության մեջ, նրա մեջ առաջանում է բնական պահանջ՝ գտնելու մի հզոր անհատ, որն իրենց փրկի կործանումից: Այդ մասին Ավետարանում ասվում է, թե Մարդու պակաս կա, Մարդ չունենք:

Բոլոր հասարակություններում մարդիկ սպասում են այնպիսի Մարդու հայտնությանը, որի առջև նախանձն ու բոլոր ցածր կրթերը ոչնչանան: Սպասում են այնպիսի Մարդու, որն ուրիշ մարդկանց համար լինի հույսի, փրկության, նախախնամության Մարդը:

«Բազմավեպում» կա այն ճշմարիտ միտքը, թե իսկական ազգային առաջնորդը պատրաստ է հանուն իր ազգի շահերի նույնիսկ մեռնել: Այս նյութերը պարբերականը շարադրում է ըստ ֆրանսիացի մտածողների: Տեղին ենք համարում այստեղ գետեղել XX դարի ֆրանսիացիների առաջնորդ գեներալ Շարլ դը Գոլի դիմումը իր ժողովրդին՝ ֆաշիստներից Ֆրանսիայի օկուպացման դժնդակ ժամին.

#### **«Բոլոր ֆրանսիացիներին»**

*Ֆրանսիան պարտվել է մի ճակատամարտում, բայց նա չի պարտվել պատերազմում:*

Պատահական կառավարողները կարող են երկյուղին տուրք տալով անձնատուր լինել՝ մոռանալով պատիվը, երկիրը մատնել ստրկության: Սակայն ոչինչ կորած չէ:

Ոչինչ կորած չէ, որովհետև այս պատերազմը համաշխարհային է: Ազատ երկրների հսկայական ուժերը կջախջախեն թշնամուն: Հարկավոր է, որ Ֆրանսիան

---

<sup>51</sup> Նույն տեղում, էջ 99-100:

այսօր իսկ ընդառաջ գնա հաղթանակին: Հետո նա կվերագտնի իր անկախությունն ու փառավորությունը: Սա է իմ նպատակը, իմ միակ նպատակը:

Ահա ինչու ես կոչ եմ անում բոլոր ֆրանսիացիներին, որտեղ էլ նրանք գտնվելիս լինեն, միանալ ինձ գործողություններում, զոհաբերության և հույսի մեջ:

*Մեր հայրենիքը մահվան վտանգի մեջ է:*

*Պայքարենք այն փրկելու համար:*

*Կեցցե՛ Ֆրանսիան:*

*Գեներալ դը Գոլ*

*18 հունիսի, 1940թ. Լոնդոն»<sup>52</sup>*

«Բազմավեպի» 1849-ի թիվ 17-ում ներկայացվում է երիտասարդների ու ծերերի փոխհարաբերության անհրաժեշտ նախապայմանները: Եթե որևէ մեկը ծերության հասակում կամենում է պատկառելի լինել, ապա նա պետք է պատանի հասակից հարգանքով վերաբերվի ծերերին, չանտեսի նրանց խրատներն ու քաջալերությունը: Որոշ պատանիներ ծերերի փորձառության դասերը ծաղրի են ենթարկում, սակայն հետագայում, երբ իրենք էլ հասնում են ծերության տարիքի, զգում են իրենց սխալը:<sup>53</sup>

«Գէշ ընկերաց վնասները» շատ ուսանելի խորհուրդներ են պարունակում: Բացատրվում է, թե ինչու անզգամ մարդիկ չեն սիրում օրինավոր մարդկանց: Նրանք կամենում են ամեն ջանք թափել, որպեսզի օրինավոր մարդիկ դառնան իրենց նման, որպեսզի իրենց չարությունները ուրիշներին աչքի չընկնի: Այդօրինակ անզգամ մարդիկ ծաղրում են պարկեշտներին՝ առաքինությունը համարելով նախապաշարմունք, իսկ հնազանդությունը՝ տկարություն:<sup>54</sup>

«Բազմավեպի» նյութերը բացատրում են, որ դաստիարակությունն անհրաժեշտ է հասարակական բոլոր խավերին, այդ թվում թե բանվորներին, թե գյուղացիներին և թե քաղաքաբնակներին:

Ներկայացվում են մարդկային դաստիարակության զանազան ձևերը: Դաստիարակությունն ամբողջությամբ թե արվեստ է և թե գիտություն:<sup>55</sup>

Դաստիարակությունը գործընթաց է, որը կարող է լինել լավ կամ վատ: Տարբերակվում են մեծախնամ դաստիարակություն, անհոգ դաստիարակություն, հաստատուն դաստիարակություն, սնոտի դաստիարակություն հասկացությունները:

Տարբեր ազգեր ստեղծել են իրենց դաստիարակության ձևերն ու մեթոդները: Արդյունքում հայտնի են հետևյալ դաստիարակության դպրոցները՝

ա. ֆրանսիական,

բ. գերմանական,

<sup>52</sup> Ա. Դոլուխանյան, Շարլ Ազնավուրը բանաստեղծ, Երևան, 2002, էջ 9:

<sup>53</sup> «Բազմավեպ», թիվ 17, Վենետիկ, 1849, էջ 258:

<sup>54</sup> Նույն տեղում:

<sup>55</sup> «Բազմավեպ», թիվ 10, Վենետիկ, 1852, էջ 148:

գ. անգլիական:

Նաև ասվում է, թե կան դաստիարակության հետևյալ տարատեսակները՝ արվեստի, առևտրի և զինվորական:

Ամեն դաստիարակություն դառնում է կատարյալ, երբ նրանում առկա են հետևյալ բաղադրամասերը՝ ուսում, կրթություն, կրոն, առողջություն, խնամք:

Դաստիարակությունը սկսվում է շատ վաղ և շարունակվում է մինչև քսան տարեկանը: Այս քսան տարիների մեջ դաստիարակությունը բաժանվում է երեք մասի՝

Ա. Դաստիարակություն մայրական:

Բ. Դաստիարակություն նախնական:

Գ. Դաստիարակություն երկրորդական:

Բոլոր տեսակի դաստիարակություններն անցնում են այս երեք աստիճաններով:

**Մայրական դաստիարակությունը** կարելի է կոչել ընտանեկան:

**Նախնական դաստիարակությունը** աշխարհիկ կամ հոգևոր դպրոցում է իրականացվում:

**Երկրորդական դաստիարակությունը** խոր գիտելիքներ է տալիս աշխարհագրությունից, պատմությունից, գրականագիտությունից, մի քանի օտար լեզուներից և այլ առարկաներից. «Ինչպես տեսնում ենք դաստիարակության մեջ ամեն բան պարունակվում է, դաստիարակությունը սահմաններ չի ճանաչում, սակայն նրա վերջնական նպատակը մարդուն վսեմացնելն է, մարդկային բնավորությունն ու արժանապատվությունը կատարելագործելը և այնպես անել, որ մարդը կարողանա հայրենիքին ծառայել, կյանքի բոլոր վիճակներում լինի օգտակար ու պատվավոր»:<sup>56</sup>

Բոլոր այս մտքերը եզրափակում են հին աշխարհից եկող մի իմաստուն պատմություն: Աշխարհը նման է մեծ գրքի, ու եթե որևէ մեկը իր երկրից բացի ուրիշ երկիր չի տեսել, ապա կարդացել է այդ մեծ գրքի միայն մեկ էջը: Ճշմարտությունն այն է, որ օտար երկիր ճամփորդելը մարդուն կրթում և կատարելագործում է, հարկավոր է միայն մարդն իմանա տեսածներից ու լսածներից օգուտ քաղել և հանդիպած վտանգների մեջ ինքն իրեն կառավարի: Ճամփորդին չորս բան է անհրաժեշտ՝ առողջություն, դրամ, լավ ընկեր և համբերություն: Այն ճամփորդը, որն իր տեսածը չի ընկալում, մտապահում, նմանվում է իրեն ճամփորդության տանող կառքի անիվներին, որոնք ճամփորդությունից ոչինչ չեն սովորում ու շահ չեն ստանում:

«Բազմավեպի» 1855-ի թիվ 3-րդում խիստ զգուշացում կա, որ դաստիարակությունն ուսմանը զոհ չպիտի դառնա: Մարդը որքան էլ գիտելիքներ ձեռք բերի, չպետք է նյութական ուսման մեջ մոռացվեն սիրտը, հոգին, խղճմտանքը, երբեմն էլ խելքը:<sup>57</sup>

<sup>56</sup> Նույն տեղում, էջ 152:

<sup>57</sup> «Բազմավեպ», թիվ 3, Վենետիկ, 1855, էջ 38:

**Բարոյական դաստիարակություն՝ նշանակում է հենց մարդ: Դպրոցում են դաստիարակում նախ քարեպաշտ մարդ և ապա քաղաքացի:**

Հասարակության մեջ մարդկային արտաքին տվյալները, պահվածքը, շարժումները շատ կարևոր են: Բավական է տեսնել մարդու ժպիտը, նրա քաղցր նայվածքը, խոսքի շնորհքը, և նա ավելի գեղեցիկ կթվա դիմացինին: Մարդու արտաքին տեսքի գեղեցկությունը շատ է կարևորվում: Պատմվում է Սուրբ Գրիգոր Մեծի հետ կապված մի գրույց: Մի օր, երբ Սուրբ Գրիգոր Մեծն անցնում էր հռոմեական հրապարակով, տեսնում է անզլիացի գերիների, որոնց դրել էին վաճառքի: Նրանց բարեկազմ մարմիններն ու գեղեցիկ դեմքերը տեսնելով, ասում է, թե այդպիսի մարդիկ պետք է ճանաչեն Ավետարանի Աստծուն: Եվ այդ պատճառով Սուրբ Ավգուստինոս կրոնավորին իր ընկերներով ուղարկում է Անզլիա, որ անզլիացիներին դարձնեն քրիստոնյա:<sup>58</sup>

Մարդու խելացիությունն ու աշխատասիրությունն առավել արդյունավետ է դառնում, երբ նա պնդակազմ է ու առողջ: Սովորելու, գիտության բարձունքներին հասնելու համար, հարկավոր է մարմնի առողջություն:

Հոգու և մարմնի առողջության միասնականությունը ցանկալի են համարում քրիստոնեական սրբազան մատյանները:

Քահանան հաղորդությունից առաջ մաղթում է հոգու և մարմնի առողջություն. «Շնորհի՛ր առողջություն հոգուն և մարմնին», - ասում է եկեղեցին իր աղոթքների մեջ:<sup>59</sup>

Բերվում են մարդու առողջության համար յոթ անհրաժեշտ նախապայմանները՝

ա/ Լավ օդ:

բ/ Լավ ուտելիք:

գ/ Կանոնավոր կյանք:

դ/ Մարմնամարզություն և խաղ:

ե/ Օդի պատշաճ բարեխառնություն(այսինքն՝ ոչ շատ շոգ և ոչ շատ ցուրտ):

զ/ Մաքրություն:

է/ Բժշկական խնամք:

Ինչպես տեսնում ենք այժմ խիստ հրատապ համարվող շրջակա միջավայրի մաքրության համար մղվող պայքարի պահանջները՝ կապված օդի մաքրության, սննդի բարձրորակության հետ առկա են դեռ XIX դարի կեսերի Մխիթարյան հայրերի գիտական մոտեցումներում:

«Բազմավեպ» իր հրապարակումներում մեծ տեղ է տալիս ոչ միայն անտիկ աշխարհի ու Եվրոպայի դաստիարակության և բարոյախոսության համակարգերին, այլև Արևելքին:

«Բարոյականք» բաժնում ներկայացվում են չինական իմաստախոսություններ՝ «Ճենաց խելացի առածներ» խորագրով:

<sup>58</sup> «Բազմավեպ», թիվ 6, Վենետիկ, 1855, էջ 82:

<sup>59</sup> Նույն տեղում, էջ 83:

Երկրի կառավարելը համարվում է ոմանց համար դյուրին գործ, սակայն իրականում այն խիստ դժվար է: Ժողովուրդը նման է ալեծուփ ծովի, և այդ ծովը թագավորը պետք է խաղաղեցնի: Եթե թագավորն անաչառ է լինում, նրան կոչում են անողորմ, երբ գթած է լինում, ասում են՝ անտեսում է օրենքը: Եթե թագավորը երջանկացնում է հասարակ ժողովրդին, նրանից դժգոհ են մնում պալատականները, իսկ երբ մեծավորներին է բարիք անում, այնժամ տրտնջում է ժողովուրդը: Ահա այդքան բարդ է թագավորների վիճակը, որոնց ոմանք երջանիկ են համարում:

Թագավորն իր ամեն բառը պետք է մտածված ասի, որովհետև լեզվի հարվածը դաշույնի հարվածից ավելի վտանգավոր է: Թագավորը պետք է զգուշանա ժողովրդին կեղեքելուց: Ժողովրդին կեղեքող թագավորը նման է այն մարդուն, որն իր մարմինը մաս-մաս կտրատում է իր ստամոքսը լցնելու համար, բայց շուտով մարմինը մեռնում է, ինքն էլ նրա հետ:

Հարուստ մարդիկ շարունակ մտածում են իրենց հարստությունն ավելացնելու մասին: Առաքինի և խելացի մարդու համար չափից ավելի ճոխությունը վերածվում է նեղության և ոչ թե օգտակարության:

Երկարատև հաջողությունը ծնում է անհոգություն ու գոռոգություն: Եթե որևէ մեկը նվաստ վիճակից հասնում է բարձր աստիճանի, ապա չպետք է մոռանա, թե ով է իրեն բարձրացրել ու չդառնա երախտամոռ:

Թագավորն այնքան թշնամի ունի, որքան որ մարդիկ կան պատիվ ու պաշտոն տենչացող: Դրա համար էլ թագավորը պետք է իրեն պաշտպանելու համար շարունակ զգոն լինի:

Լավ գիրքը, բարի խորհուրդն օգտակար են, սակայն, և ոչինչ այնքան չի ազդում մարդու վրա, որքան կենդանի օրինակը:

Երբ մարդու տուն այցելում է նշանավոր մարդ, դրանով ուրիշների մոտ պարծենում են: Իսկ եթե հարուստի տուն գալիս է աղքատ, ապա հարուստը ամաչում է դրանից: Եվ իզուր: Չէ որ աղքատը հարստի տնից ոչինչ չտարավ, ոչ էլ իր աղքատությունը նրան թողեց:

Մարդու համար մահացու սուր է արժաթասիրությունը և ամենից գորեղ վահանը իր անշահախնդրությունն է:<sup>60</sup> Դու ավանակ նստած գնում ես ու տեսնում ես, թե ինչպես մեկ ուրիշը գնում է փառահեղ ձիու վրա նստած: Դու դրանից տրտմում ես, սակայն, իզուր, որովհետև շատ-շատերն անգամ այդ ավանակը չունեն և քո հետևից քայլում են բեռների տակ կքված:

Ճշմարիտ քաջությունը կառավարում է բանականությունը:

«Բազմավեպի» բավականին թվով համարներ նվիրված են ընտանեկան կյանքին՝ ընտանիքի ծնողներին, ընտանիքի անդամների փոխհարաբերությանը:

---

<sup>60</sup> «Բազմավեպ», թիվ 3, Վենետիկ, 1858, էջ 66:

Մարդկային կյանքի ամենամաքուր և կենդանի աղբյուրը սերն ու խանդադատանքն են:

Այս սերն ու խանդադատանքը գեղեցիկ են ամուսինների ու նրանց ստեղծած ընտանիքի կյանքում: Շատ կարևոր է նաև սերը մոր ու հայրենիքի նկատմամբ: Ահա այս խնդիրներին է վերաբերում «Ընտանեկան դաստիարակություն» խորագրվող շարունակաբար տպագրվող հոդվածաշարը, որն սկսվում է 1858-ի թիվ 4-րդից:

Հոդվածում բացատրվում է, թե ինչ դեր ունի ընտանիքը անհատի դաստիարակության գործում: Ընտանիք նշանակում է մարդուն փրկել միայնության դժնդակ իրողությունից, անհատի մեջ առաջացնել առանձնահատուկ վերաբերմունք դեպի շրջապատող մարդիկ, ինչ-որ չափով կանխել մարդկային հասարակությանն այնքան վնասներ պատճառող եսասիրությունը: Ընտանիքը նպաստում է, որ քաղաքներ կառուցվեն, ընկերություններ հիմնվեն, ժողովներ գումարվեն, մարդիկ մեկնեն շրջագայելու և միմյանց հետ սերտ միասնության մեջ լինեն:<sup>61</sup> Ընտանիքը միակ գտնված ձևն է, որ մարդը լինի հավատարիմ էակի կողքին, զգա նրա վերաբերմունքի ջերմությունը, հույսը դնի նրա վրա իր դժվարին պահերին, հիվանդության ժամանակ, կիսի նրա հետ իր ուրախությունն ու վիշտը:<sup>62</sup> Մա անհրաժեշտություն է, որովհետև այդ միաբանության վրա է հիմնված մարդկային ցեղի հարատևությունը: Մարդկային տեսակի ընտանեկան ինստիտուտի վերաբերյալ համանման մտքեր կան դեռևս անտիկ աշխարհում: «Գիրք պիտոյից» ճարտասանական ձեռնարկում, ասվում է, թե ամեն ազգի առաջխաղացումը կախված է օրինավոր ընտանիքներից: Եթե ընտանիքները համերաշխ են ազգը կապրի խաղաղության մեջ և կթագավորի բարությունը: Իսկ դրա հետևանքով կկառուցվեն տներ, օրենքը կծառայի մարդկանց, թագավորները կպատվեն, իշխանները կկատարեն իրենց պարտականությունները, ծերերը կլինեն խնամված, երեխաները կմեծանան գուրգուրանքի մեջ և ազգը կծաղկի:<sup>63</sup>

«Բազմավեպի» հոդվածում բացառիկացվում է ամուսնական սիրո դերը մարդկային հասարակությունը հաստատուն պահելու գործում. «Ապա ուրեմն մարդկային զգացմանց մեջ միայն ամուսնական սերն է, որ ամենեն ավելի և ամենեն աղեկ կլիացնե այլս ապրելու պետքը և ամեն բանե ավելի զմարդ կմխիթարե: ...Անով մարդկային կյանքը կերպով մը հաստատություն կառնու»:<sup>64</sup>

Մարդու համար կյանքն անչափ սիրելի է, մարդն ուզում է կրկին ապրել և ահա ամուսնական սիրուց ծնվում են զավակները, որոնք շարունակում են ծնողների կյանքը....

Ումանք անմահ են մնում իրենց կատարած եզակի գործերով, ու նրանց անունը շարունակում է ապրել դարեդար, իսկ ումանք, և դրանք բազում են, հետմահու կյանք են

<sup>61</sup> «Բազմավեպ», թիվ 4, Վենետիկ, 1858, էջ 98:

<sup>62</sup> Նույն տեղում:

<sup>63</sup> «Գիրք պիտոյից», էջ 41-42:

<sup>64</sup> «Բազմավեպ», թիվ 4, Վենետիկ, էջ 99:

ստանում իրենց զավակների հիշողության մեջ. «Մարդկանց մեծ մասը կփափաքին իրենց որդիվորը այս անմահությունը ձեռք ձգել»:<sup>65</sup>

Ընտանիքի կարևորությունն ու քաղցրությունը գիտակցելու համար անհրաժեշտ է ապրել ընտանիքի մեջ, տանել ընտանիքի կապանքը: Ընտանեկան կյանքը ծառայություն է, որը չի վարձատրվում, որովհետև ինքնաբերական է, այն հենված է միայն անշահախնդիր սիրո վրա:

Խոսվում է նաև անհաջող ամուսնությունների մասին, որոնք ավարտվում են բաժանությամբ:

«Բազմավեպի» 1858-ի թիվ 6-ում «Ընտանեկան դաստիարակութիւն» խորագրի տակ խոսվում է կնոջ ու տանտիկնոջ մասին:

Նկատենք, որ կնոջ և տանտիկնոջ վերաբերյալ դատողությունները XXI դարում բավականին տարբեր են, պատճառն այն է, որ ներկայիս զարգացած երկրներում, ինչպես ԱՄՆ-ում, Կանադայում, Եվրոպայի որոշ երկրներում, ընտանիքում և հասարակության մեջ կնոջ իրավունքները հավասարեցված են տղամարդուն: Հայաստանն այս հարցում բավականին առաջադեմ երկիր է. հայ կինը թեև լրիվ չի հավասարեցված տղամարդուն, սակայն գտնվում է քաղաքակիրթ երկրին բնորոշ կարգավիճակում:

Հնում տղամարդը ցածր ու անարգ էր համարում տնային բոլոր գործերը, և դրանք վերապահված էին կանանց:

Կանայք հմուտ են տնային տնտեսությունը վարելու մեջ, սակայն այն կանայք, որոնք այդ գործը չեն դիտում իբրև ծանր լուծ, ապա այն կատարում են սիրով, հոժարությամբ և հասնում են կատարյալ հաջողության:

Կինը այն անձն է, որ խնայողաբար է օգտագործում ամուսնու վաստակը՝ դրանով առավել ապահով դարձնելով իր զավակների կյանքը:

Տան մեջ կարգ ու կանոնը ընտանիքի նորմալ կյանքի անհրաժեշտ բաղադրիչն է: Այն ընտանիքներում, ուր կա ավելի կարգ ու կանոն, այնտեղ ավելի մեծ չափով կարելի է տեսնել ընտանեկան միություն և խաղաղություն:

Ֆենելոնն իր «Յաղագս դաստիարակութեան աղջկանց» ճառում Սուրբ գրքից մեջբերում է ժիր ու աշխատասեր կնոջ օրինակը, որը դաստիարակչական է բոլոր կանանց համար:

Համառոտելով բերում ենք այդ հատվածը: Խելացի ու աշխատասեր կինը թանկարժեք քարերից ավելի պատվական է: Ամուսինը նրա վրա վստահ է և տուն է գալիս միշտ ավարով: Բոլոր բարի գործերում այդ կինը գործակից է իր ամուսնուն ու երբեք չարիք չի գործում: Բուրդ ու կտավ է գտնում ու իր ձեռքով գեղեցիկ բաներ պատրաստում, վաճառականի նավի նման հեռավոր տեղերից գանձեր է ժողովում:

---

<sup>65</sup> Նույն տեղում:

Առավոտյան վաղ է արթնանում, մտածում ընտանիքի անդամներին կերակրելու և աղախիններին գործի դնելու մասին:

Երբ գեղեցիկ արտ է տեսնում, այն գնում է և նրա բարիքներով երկիրը լցնում: Մեջքին գոտի կապած և թևերը կշտած աշխատում է, որովհետև սիրելի է իր համար աշխատանքը:

Նրա ճրագը գիշերը չի հանգչում, ողջ գիշերն այրվում է: Ձեռքն անդադար աշխատանքի մեջ է, մատներն էլ առանց ձանձրանալու մանում են իլիկը: Այդպիսի կնոջ ձեռքը բաց է աղքատին ողորմություն տալու և իր ունեցածից տնանկին բաժին հանելու համար: Ամուսինը որևէ տեղում ուշանալիս ընտանիքի համար հանգիստ է: Բոլոր տնեցիները երկու-երկու ձեռք հագուստ ունեն: Ամուսնու համար ազնիվ ու նուրբ կտավ և ծիրանի է պատրաստել, իր համար էլ վերարկուներ: Նրա ամուսինը, երբ երկրի ծերերի ու ուրիշ պատվավոր բնակիչների հետ նստած լինի ժողովատեղում, ամենքը նրան մատով են ցույց տալիս: Կտավներ է գործել, վերարկուներ պատրաստել ու դրանք վաճառել Քանանացիներին: Բերանից միայն գեղեցիկ խոսքեր են լսվում, որոնք գեղեցիկ են ու մտածված: Ուժն ու մեծավայելչությունը նրան ծառայում են իբրև հագուստ, և դրա համար կյանքի հետագա օրերն ուրախ են լինելու:

Իր տան ամեն ինչը հսկում է, երբ պարապ է, մենակ երբեք հաց չի ուտում: Նրա ողորմությունների շնորհիվ զավակները լավ են մեծանում, ամուսինն էլ գովեստի խոսքեր է ասում. «Շատ աղջիկներ հարստություն են դիզել ու մեծացել, բայց դու բոլորից առաջ անցար: Փուչ զարդարանք ու սուտ գեղեցկություն վրադ չկա, որովհետև խելացի ու բարեպաշտ կինը օրհնանք է լսում, ինչպես ինքն էլ գովում է երկյուղած մարդկանց: Իր շուրթերի պտուղը տվեք իրեն, ու ամուսնուն էլ դռների մեջ գովեք, որովհետև ամեն բանի մեջ ամուսինը կնոջը պիտի ճամփա ցույց տա, որից հետո երկուսով հաջողություն կգտնեն:<sup>66</sup>

Շատ կարևոր է, որ տանտիկինը ճիշտ ծառաներ ընտրի իր ընտանիքի համար, որովհետև նրանք անպայման պետք է լինեն հավատարիմ ու աշխատասեր: Կնոջ դերը ծառաների նկատմամբ պետք է լինի միշտ արթուն լինելն ու հսկելը:

Տանտիկինը նաև պետք է դաստիարակի ծառաներին, որովհետև ծառա լինելը դյուրին բան չէ:

«Բազմավեպում» դիտարկվում է **ծառա և տեր** փոխհարաբերության լիովին փոխվելը XIX դարում: Հնում ծառա և հպատակ բառերը միմյանցից հեռու չէին: Հպատակ նշանակում էր ծառա և վերջինս համարվում էր գերդաստանի մաս ու տերերի հետ սեղան էր նստում և ընկերական խոսակցությանը մասնակցում: Սակայն, երբ ծառան համարվեց **ազատ** մարդ, դրությունը փոխվեց: Ծառաների ու տերերի միջև ծագեց խուլ մի պայքար. տերերը դարձան ամբարտավան, ծառաները՝ ոչ հավատարիմ:<sup>67</sup> Ներկա

<sup>66</sup> «Բազմավեպ», թիվ 6, Վենետիկ, 1858, էջ 163-164:

<sup>67</sup> Նույն տեղում, էջ 115:



ծառաներն այլևս հպատակ չեն. նրանք տնից տուն են փոխվում և ճարակորեն փորձում են շատ դրամ վաստակելու համար ծառայությունից հրաժարվել:

Տանտիրոջ պարտքն է ծառային այնպես վերաբերվել, որ նա չփախչի ուրիշի մոտ: Հավատարիմ ծառան մեծ պարզ և նա ընտանիքում մի քանի սերնդի հավատարիմ պահապան է համարվում:

Սակայն կինը նաև հաճույք պիտի պատճառի իր ամուսնուն: Առտնին փոխհարաբերություններում՝ ընտանիքի խնդիրներում, ամուսնու և կնոջ մտերմության գրավականներից մեկը սրտի կրթությունն է:<sup>68</sup>

Ամուսնական կյանքում և՛ կինը, և՛ տղամարդը միմյանց պարտավոր են ճիշտ դաստիարակել: Տղամարդը դժվարություններից ու ձախորդություններից շուտ է հուսահատվում, մինչդեռ կինը առավել դյուրությամբ է տանում կյանքի հարվածները: Եվ խելացի կանայք օգնում են իրենց ամուսիններին դուրս գալու ծանր կացությունից:

Երբ կինը իր վարպետությամբ ծիծաղով է ընդունում ամուսնու ձախորդությունը, ամուսինը կարծես վերագտնում է իր կորցրած հոգեկան խաղաղությունը:

«Բազմավեպի» 1858-ի թիվ 7-ում «Հայր և Մայր» հոդվածն է զետեղված, որը ներկայացնում է ընտանիքի երկու գլխավորների տեղն ու դերը ամուսնական կյանքում:

**Ծնողներն իշխանության իրավունք ունեն իրենց զավակների վրա, սակայն ոչ սեփականության իրավունք:<sup>69</sup>**

Վեճ կա. արդյոք նորածին երեխային մայրը պետք է կերակրի՞, թե՛ դայակը: Ոմանք դրա մեջ տարբերություն չեն տեսնում, մինչդեռ բնականաբար ճիշտն այն է, որ նորածինին կերակրի մայրը, որովհետև նորածին երեխայի վրա մեծ է մոր ազդեցությունը թե առողջական և դաստիարակության առումով:

Երեխաներին շատ խիստ ձևերով դաստիարակելը նրանցից կպատրաստի արհեստական մարդ և ոչ թե խորհող ու մտավոր էակ:

Հոր և մոր դաստիարակությունը նույնը լինել չեն կարող, թեպետ նպատակը նույնն է: Զավակներին պետք է ներշնչել լինելու ուժեղ թե մարմնով և թե հոգով: Բերվում են հույն մեծագույն փիլիսոփա Պլատոնի պատգամներն՝ ասված տղաների վերաբերյալ: Վերջինս պահանջում է, որ դպրոցներում խստորեն հետևեն մարմնակրթությանը, բայց և չմոռանան երաժշտության միջոցով կրթել հոգին: Մարմնակրթությունը սովորեցնում է տղաներին հաղթել սեփական անձին, չընկճվել դժվարություններից, ենթարկվել կարգ ու կանոնին:

Տղայի դաստիարակությունը, բնականաբար, ունի աստիճանականություն՝ կախված տարբեր տարիքային հանգամանքներից: Փոքր տարիքում տղան ավելի մոր կարիքն ունի, ուստի հայրը շատ չի խառնվում նրա դաստիարակությանը, միայն երբեմն-

<sup>68</sup> Նույն տեղում, էջ 166:

<sup>69</sup> «Բազմավեպ», թիվ 7, Վենետիկ, 1858, էջ 194:

երբեմն խորհուրդներով օժանդակում է մորը՝ մանավանդ երբ վստահ է վերջինիս զգոնությանն ու նվիրվածությանը: Ավելի մեծ տարիքում արդեն մեծանում է հոր դերը:

Սակայն դաստիարակության հիմնական դերը պատկանում է օրինակին: Հայրն ու մայրը աղջկան ու տղային առաջին հերթին դաստիարակում են սեփական վարքագծով. «Օրինակով դաստիարակությունը ամենագորավորն է. նրա առջև տղայի կրքերն ու ախտերը կորցնում են իրենց ուժը»:<sup>70</sup>

Նույն տարվա «Բազմավեպի» թիվ 8-ում դաստիարակչական պատվիրաններն ասվում են տղաների համար:

Բնութագրվում են արական սեռի մարդու տարբեր հասակների առանձնահատկությունները: Մարդու ամեն տարիք էլ ունի իր գեղեցկությունը: Ծերության գեղեցկությունը մեծավայելուչ ձևի մեջ է, այն լի է խանդաղատանքով դեպի երիտասարդությունը, ծերը վստահելի է իր ճշմարտության և առաքինության մեջ: Այրական հասակի գեղեցկությունը ուժն է, քաջությունը, թե իր անձը և թե ուրիշներին մեծարելը, հաստատուն փորձառությունը: Երիտասարդը գեղեցիկ է իրենից մեծերին պատվելով ու սիրելով, ախտերն ու ստոր արարքներն արհամարհելով: Իսկ փոքր տղաների գեղեցկությունը նրանց անմեղությունն է:<sup>71</sup>

Տղա երեխաները պետք է իրենց պահեն ըստ տարիքի: Ծիծաղելի է տեսնել մի տղայի, որ կրկնօրինակում է տարեց մարդու կերպը, ոճը, կենցաղավարությունը: Իմաստուն դաստիարակները երկարացնում են տղայի մանկությունը:

Տղաներին ծնողները երբեք չափից ավելի երես չպետք է տան, որովհետև պահանջվածից ավելի սեր ու գուրգուրանք ցուցադրելը հետո ավարտվում է արցունքով ու դառնությամբ, անեծքներով ուղղված չմտածված սիրո ցույցերի նկատմամբ. «...որքան ծնողներ այս աշխարհում իրենց սխալ սիրո պատիժն են կրել»:<sup>72</sup>

1858-ի թիվ 10-ում առկա է «Աղջիկ տղայ» հոդվածը: Բարդ է աղջկա դաստիարակությունը: Պահանջում են, որ օրիորդը չափավոր, պարկեշտ ու անմեղ լինի, բայց միևնույն ժամանակ կամենում են, որ հաճոյական ու հրապուրիչ լինի: Կանանց նաև պետք է վարժեցնել չարքաշ ու գործունյա կյանքի, բայց այնպես, որ նրանք չկորցնեն երևակայության կրակը, աշխույժությունն ու եռանդը:<sup>73</sup>

Աղջկա դաստիարակության խնդիրներում որոշ կարծիքներ բավականին հնացած են: Ցանկալի է. որ օրիորդը կրթվի գերդաստանի մեջ: Օրիորդի գեղեցկությունն ու աշխույժը առաքինություններ չեն, բայց դրանք պետք է համարել բարեմասնություններ, որոնք մարդուն տվել է բնությունը:

---

<sup>70</sup> Նույն տեղում, էջ 198:

<sup>71</sup> «Բազմավեպ», թիվ 8, Վենետիկ, 1858, էջ 226:

<sup>72</sup> Նույն տեղում, էջ 229:

<sup>73</sup> «Բազմավեպ», թիվ 10, Վենետիկ, 1858, էջ 289:

Շատ հետաքրքիր է հետևյալ դիտարկումը: Ֆենելոնն իր ժամանակի կանանց հիշեցնում է, թե որքան պարզ էին հագնվում հույն ու հռոմեացի կանայք: Դա երևում է այն արձաններից ու նկարներից, որոնք հասել են նոր ժամանակները:

Ոմանք սխալ են, եթե կարծում են, թե աղջիկները չպետք է կրթվեն, որովհետև կրթված կինը վնաս է գերդաստանի համար: Սրանով կինը նվաստացվում է, որովհետև XIX դարում աշխարհը մեծ քայլերով գնում է դեպի լուսավորություն:

Հողվածի այս մասում, սակայն, առկա է միջին ճամփան ընտրելու գիծը. կինը պետք է կրթվի, սակայն պարտադիր չէ, որ կինը շատ բարձր կրթություն ունենա: Կնոջ կրթվելն ու գիտելիքներ ունենալը պարտադիր է, որովհետև կրթված մայրերն ազգի առաջընթացի նախապայմանն են:

Աղջիկը հայրական տանը անբան չպետք է լինի, այլ վարժեցված տնային գործերին, որպեսզի ամուսնանալուց հետո իր տանը այդ ամենը գործածի:

Բոլոր կանանց խորհուրդ է տրվում կարդալու Ֆենելոնի «Յաղագս Դաստիարակութեան Աղջկանց» գրքուկը, որն ըստ «Բազմավեպի» հրատարակիչների՝ որքան էլ հնանա, չի կորցնելու իր արժեքը:

«Ընտանեկան դաստիարակութիւն» բաժնում առկա է նաև «Եղբայր և Քոյր» հոդվածը: Նրանում բերվում է Արիստոտելի այն միտքը, թե եղբայրն ու քույրն իրար պետք է սիրեն հավասարապես. «Բարեկամության առաջին հատկանիշը, որը զլիսավորն է, հավասարությունն է: Ասել բարեկամ, նշանակում է ասել հավասար: Բարեկամությունը երկու մտերիմների միջև ենթադրում է նույն իրավունքներն ու պարտքը: Բարեկամությունն իսկական է, երբ յուրաքանչյուր ոք տալիս է, առանց պահանջելու»:<sup>74</sup>

Չին փիլիսոփա Կոնֆուցիոսի իմաստախոսություններին հանդիպում ենք «Բազմավեպի» 1853 թվականի հրապարակումներում: Դրանցից մեկը պատմում է Չինաստանի մի կայսեր ծայրահեղ ազահության մասին: Այդ կայսրն ուներ առյուծի ուժ և վագրի կատաղություն, սակայն երկնային բարկությունը պատժեց այս անիրավ թագավորի սերնդին: Չնայած կայսրն իր կենդանության օրոք կառուցել էր 300 ապարանքներ, շքեղ պարտեզներ, ողջ 10 տարի աշխատեց իր գերեզմանը կառուցելու համար: Չեխ փառահեղություն ստեղծեց սեփական դիակի համար, մինչդեռ նրա սերունդների մարմինները նույնիսկ ավազի հատիկով չծածկվեցին:<sup>75</sup> Այս նյութը կարդալով ակամայից հիշում ես 1915 թվականի երիտթուրքերի կազմակերպած եղեռնի մեկ ու կես միլիոն հայ նահատակներին, որոնցից շատերն այդպես էլ քրիստոնեական հավատին համապատասխան գերեզման չունեցան:

<sup>74</sup> «Բազմավեպ», թիվ 11, Վենետիկ, 1858, էջ 323:

<sup>75</sup> «Բազմավեպ», թիվ 5, Վենետիկ, 1859, էջ 66:

Կոնֆուցիոսի իմաստախոսությունները երբեք չեն հնանա, դրանք ինչպես կարևոր էին XIX դարում, երբ «Բազմավեպը» տպագրում էր դրանք, նույնքան արդիական են այսօր: Ահա դրանցից մի քանիսը՝

1. Ընտանիք կառավարելու համար, պետք է մարդ ինքն իրեն լավ կառավարի, պիտի դառնա այն օրինակը, որին պետք է հետևեն ընտանիքի անդամները:<sup>76</sup>
2. Մարդուն հատուկ է սիրելը, բայց ծնողների սերն իր առաջին պարտքն է, որից հետո պետք է սիրի ուրիշներին:<sup>77</sup>
3. Եթե աշխարհի բոլոր մարդիկ գթասիրտ լինեն, ողջ աշխարհը կդառնա մի ընտանիք: Եվ արդեն կարևոր չեն տարբեր դասերը՝ մեծամեծ, միջակ կարգի մարդ, ռամիկ: Մարդը կդառնա մարդ, Աստծու ստեղծած կատարյալ արարածը:<sup>78</sup>
4. Իմաստունը չի ցավում, երբ իր կողքին եղած անձինք իր հանճարը բանի տեղ չդնեն:
5. Միշտ ապրիր այն զգացողությամբ, թե քեզ տասն աչքով հետևում են և տասը ձեռքով մատնացույց անում:<sup>79</sup>

«Բազմավեպի» 21-րդ տարվա առաջին համարն սկսվում է «Ողջոյն առ ընթերցողս» նախաբանով: Նրանում նշվում է, թե 20 տարի ազգի ոգին արթուն պահելով «Բազմավեպը» վստահորեն շարունակում է իր ընթացքը՝ ազգի միտքը առաջ մղելու վսեմագույն առաքելությամբ: Նախաբանն ավարտվում է խիստ պատկերավոր. հայրենասեր մարդը նմանվում է սրատես արծվին, որը ժայռի վրայից իր որսը զննելուց հետո ապահովությամբ իջնում է վրան:<sup>80</sup> Ահա արծվի նման պետք է լինեն և՛ «Բազմավեպի» հրատարակիչները, և՛ ընթերցողները:

«Բազմավեպի» 1843-1863թթ. ժամանակահատվածում տպագրված մանկավարժական, բարոյախոսական խոհերը և՛ խորապես ազգային են, և՛ համամարդկային. նրանք այսօր ունեն ոչ միայն ճանաչողական, այլև հույժ կիրառական արժեք:

---

<sup>76</sup> «Բազմավեպ», թիվ 8, Վենետիկ, 1859, էջ 225:

<sup>77</sup> Նույն տեղում, էջ 226:

<sup>78</sup> Նույն տեղում, էջ 227:

<sup>79</sup> Նույն տեղում, էջ 323:

<sup>80</sup> «Բազմավեպ», թիվ 1, Վենետիկ, 1863, էջ 5:

ՀԱՎԵԼՎԱԾ

«Հավելվածում» ներկայացնում ենք «Բազմավեպի» նյութեր, որոնք փոխադրել ենք արդի արևելահայերենի և կարծում ենք ուսուցողական ու ճանաչողական բնույթ ունեն հատկապես բանասիրական ֆակուլտետի ուսանողության համար:

### Առակ

Առակը գրականության մի տեսակն է, որ մարդուն միշտ սիրելի է եղել, որովհետև քիչ բառերով շատ բան է հասկացվում, առանց վիրավորելու խրատում է, առանց սիրտ կոտրելու հանդիմանում ու առանց ձանձրացնելու կամ հոգնեցնելու զվարճացնում: Մեր Մխիթար Գոշի առակները, ինչպես նաև Ոլիմպիանու և Վարդանի անունով հասածներն ընդհանրապես շատ բնական ու գեղեցիկ են: Արևելցիների մեջ անվանի են Լոխման բժշկի առակները, իսկ հույների Եզոպոսը բոլորից բարձր է գնահատվում իր առակների իմաստությամբ ու գեղեցիկ պարզությամբ գրված լինելու համար: Դրա պատճառով գրեթե բոլոր եվրոպացի առակախոսները նրան հետևեցին: Լատինացիների Ֆեդրոսը Եզոպոսի առակները շատ գեղեցիկ ոտանավոր դարձնելով՝ կոկեց: Նույն առակները ֆրանսիացիների Լաֆոնտենն այնպես զարդարեց իր զվարճալի, բնական, կենդանի ու խելացի ոճով, որ նախանձելի եղավ բոլորին, և չկա որևէ մեկը, որ հասնի նրա վարպետության աստիճանին: Իտալացիների անվանի առակախոսներն են Դե Ռոսսին, Բերտոլան, Պինետթին և ուրիշներ, գերմանացիների մեջ Լեսինգ, Գելլերտ և այլն, ռուսների մեջ՝ Դմիտրիև, Կռիլով և ուրիշներ:<sup>81</sup>

---

<sup>81</sup> «Բազմավեպ», Վենետիկ, 1843, թ.2, էջ 47:

**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ**  
**ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

**Տեղեկություն Աստրախանի հայերի մասին<sup>82</sup>**

Մեր ազգից Եվրոպայի ու Ասիայի կողմերը ցրվածների մեջ են նրանք, որոնք գնացել են հին ժամանակներում Աստրախան և դարձել են անվանի: Դրանք Անի քաղաքի վերջին ժամանակները՝ 1239-ին թաթարական Չարմաղան անունով զորավարի ձեռքից փախան, գնացին Աստրախանի կողմերը, որը Չինգիզ խանի որդիների ձեռքին էր ու հարյուր տարվա չափ այնտեղ բնակվելուց հետո, թաթարների հետ պատերազմելով, բազմությամբ ելան ու անցան Ղրիմ, այնտեղից էլ կամաց-կամաց Լեհաստան, Հունգարիա և ուրիշ վայրեր: Ժամանակակից Աստրախանը հին Աստրախանի տեղում չի, այլ քիչ հեռու՝ Վոլգա կոչված գետի բերանում, կառուցված է մի կղզու վրա՝ Կասպից ծովի ափին: Այս քաղաքը Հաջի Դարխան անունով թաթարի կառուցածը լինելու պատճառով կոչվել է Աստրախան: Հիմա Ռուսաստանի երևելի քաղաքների մեջ իր մեծության, հարստության, բանուկ վաճառականության շնորհիվ համարվում է ութերորդը: Քաղաքի շրջապատը գրեթե երեսուն մղոն է, ունի հին ու աղյուսից շինված պարիսպ: Տներից շատը փայտաշեն են, բայց ունի նոր շենքեր ու պալատներ՝ հրապարակներ ու ուղիղ փողոցներ: Ասիայի ու Եվրոպայի մեջտեղում գտնվելով՝ վաճառականության համար բանուկ է և տարեցտարի 30.000 վաճառականներից ավելի դրսից գալիս են այստեղ: Իր վաճառքի ապրանքների գլխավորներից մեկը ձուկն է, որովհետև ասում են, թե Վոլգայի ձկների առատությունը աշխարհի մեկ այլ գետ չունի: Աստրախանն իր գավառով 1552-ին թաթարների ձեռքից վերցրեց Ռուսաստանի Իվան Վասիլևիչ թագավորը, սակայն մինչև հիմա էլ գլխավոր բնակիչները թաթարներ են, մնացածը՝ ռուս, հայ, վրացի, հոռոմ(հույն), պարսիկ և հնդիկ, որ կռապաշտ են և ունեն փոքրիկ կռատուն: Վերն ասածներից հասկացվում է, որ Աստրախանի ներկա հայերն անեցի չեն, եկել են 1700-ականներից՝ Պարսկաստանից, այնտեղ հաստատվել ու շատացել: Դրա համար էլ նրանց լեզուն, Ռուսաստանի մյուս հայերի լեզվից տարբեր է ու գրաբարին ավելի մոտիկ: Մինչև 1744թ. Աստրախանում բնակվել են միայն վաճառական հայեր: Ռուսաց տերությունը նրանց այնտեղ բնակեցնելու նպատակով՝ զանազան ազատություններ է տվել հայերին, խոստանալով, թե նրանց հպատակությունը մշտական չէ, այլ ժամանակավոր, միայն թե հայերը չունենան ռուս վաճառականների արտոնությունները: Սակայն այս ազատությունը անփոփոխ չմնաց: Հայերի կեսն իրենց կամքով, կեսն էլ պետության կողմից, երբեմն պակասեցին, երբեմն ավելացան, մինչև 1799թ.: Հիմա Աստրախանի 40.000 բնակիչների մեջ թաթարներից ու ռուսներից հետո

<sup>82</sup> «Բազմավեպ», թիվ 4, Վենետիկ, 1843, էջ 61-63:

ամենաբազմամարդը, երևելին ու պատվելին մեր ազգն է: Վերջին հաշվարկներով պարզվում է, որ 2900-ի չափ են այնտեղի հայերը: Ունեն երեք եկեղեցի և երկու դպրոց, ջանում են առաջադեմ լինել ուսման և կրթության մեջ: Մեծ շահ ունի Ռուսաստանը հայերի վաճառականությունից, այգեգործությունից ու շերամ պահելուց. այս բոլոր արհեստները հայերի ձեռքին են: Բացի այդ, իրենց դատարանի բոլոր ծախսերն իրենք են հոգում՝ տարին գրեթե 10.000 ռուբլի վճարելով, որը կազմում է 50.000 դոլար:

Աղաբաբ անունով հայ ազնվական մեկը Աստրախանում 40 տղաների համար դպրոց է բացել: Հովհաննես Արղության կաթողիկոսն էլ ուրիշ դպրոց է այնտեղ բացել, որ օրեցօր առաջադիմում է: Դպրոցին կից կա տպարան, որտեղ զանազան գրքեր են տպագրվում:

Ազգասեր Լազարյան իշխանները հատուկ գումար են հատկացրել Աստրախանի հայերի համար, ինչպես արել են Գրիգորուպոլիսի և ուրիշ ազգային դպրոցների համար: Բայց մենք հարկ ենք համարում այս իշխանական գերդաստանի ու նրա կատարած բարեգործությունների մասին այս օրագրի մեջ առանձին հոդվածով հանդես գալ, որպեսզի մեր ազգակիցները մի կողմից ուրախանան, որ մեր մեջ գործնականում ազգասիրությունը ցուցաբերողները չեն պակասում, մյուս կողմից էլ, որ հորդորենք նման ազգասերներին նախանձախնդիր հետևողներ ունենալու համար:



**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ**  
**ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**Լիբանանի մայրի ծառերը<sup>83</sup>**

Լիբանանի մայրի ծառերը աշխարհի բնության հիշատակարաններում ամենից երևելիներն ու խիստ անվանիներն են թե կրոնի, թե բանաստեղծության և թե պատմության մեջ:<sup>84</sup> Հայտնի է, որ Սուրբ գրքերի մեջ դրանք հաճախ օրինակ են բերում մեծության, փառասիրության, և ամեն տեսակ վսեմ ու զվարճալի տեսարանների համար: Սողոմոնն էլ Աստծու տաճարը կառուցելու ժամանակ դրանք վերցրեց ու գործածեց: Այս պատճառով Լիբանանի մայրի ծառերը ոչ միայն հին ժամանակներում սրբազան ծառերի պես հարգի էին, այլև՝ մինչև հիմա ասորիների երկրի բնակիչները ինչ ազգից և ինչ կրոնի էլ դավանելիս լինեն, պաշտում են այդ ծառերը և մտածում են, թե, չնայած սրանք բույս են, սակայն մարդկանց ու կենդանիների նման խելք ու նախազգիտելիք ունեն և նախապես գուշակում են եղանակները՝ ճյուղերն իրենց ցանկությամբ այս ու այն կողմ են դարձնում, երբեմն էլ դեպի գետին են ծռում և այլն...

Զարմանալի բաներից մեկն էլ այն է, որ ողջ Լիբանանում միայն մեկ տեղում են աճում այս ծառերը և այնտեղ սրանցից գատ ուրիշ բույս չկա: Ցավալի է, որ սրանք էլ տարեցտարի քչանում են: Առաջ ճանապարհորդները 30, 40-ի չափ էին հաշվում, դրանցից հետո 17 հաս են գտել, ավելի ուշ՝ 12:

Հիմա խոշորներից մնացել են միայն յոթը: Սրանց կողքին կա նաև ուրիշ չորս կամ հինգ հարյուր մայրի ծառերով մի անտառ էլ: Իսկ այն կարծիքը, թե Լիբանանի մայրի ծառն ուրիշ այլ երկրում չկա, անհիմն է, որովհետև Պալլաս անունով երևելի բնախոսը նույն ծառերից գտավ նաև Ուրալյան լեռների վրա, իսկ Բելոն ճանապարհորդը փոքր Ասիայի մեջ: Ոմանք էլ փորձեցին օտար երկրներում մեծացնել այս տունկը: 1683-ին տնկեցին Լոնդրայի մոտ՝ Չելսի կոչված պարտեզի մեջ, և այն դարձավ առաջին մայրին,

---

<sup>83</sup> «Բազմավեպ», թիվ 12, Վենետիկ, 1843, էջ 184-185:

<sup>84</sup> Հիշենք, թե Նարեկացին «Մատյան ողբերգության» երկում ինչ է ասում այդ մասին.

Եթե **անգամ ողջ մայրի անտառներն**

**այն Լիբանանի**

Զողելով դարձնեմ կշեռքի լծակ

Եվ մի նժարին իբրև կշռաքար

Արարատ լեռը դնելու լինեմ,

Դարձյալ չի կարող նա իր ծանրությամբ

Իջնելով հասնել, համագուգակցել ու

հավասարվել

Մյուս նժարի հանցանքներիս հետ (Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, Թարգմանությունը Վազգեն Գևորգյանի, Երևան, 2005, էջ 61):

որ Եվրոպայի մեջ երևաց: Այս փորձի հաջողությամբ շատ մարդիկ էլ որոշեցին դրան հետևելու, 1745-ին Ժյուսիեռ Ֆրանսիացին մի մատողաշ ծառ բերեց Լիբանանից, որ հիմա Փարիզի բուսաբանական այգու գեղեցիկ զարդերից մեկն է: Լիբանանի մայրի ծառը միակերպ չի մեծանում ու արագ հասնում իր զարմանալի բարձրությանը: Առաջին տարին քիչ է բարձրանում, յոթ կամ ութ տարվա մեջ հազիվ յոթ կամ ութ ոտնաչափ, բայց դրանից հետո արագ է աճում ու տարվա մեջ բարձրանում է 100 ոտք ու դրանից հետո էլ չի բարձրանում: Լիբանանի այն հաստաբուն մայրին, որ ըստ ճանապարհորդների 36 ոտք շրջագիծ ունի, 3000 տարեկան է: Մայրու սերմից ելած ձեթով եթե որևէ բան օժեն, այլևս չի փտում և, անշուշտ, դրա համար է, որ հին ժամանակներում ըմբշամարտիկները այդ ձեթով են օծվել: Հին ժամանակներում կուռքերի արձաններն էլ մայրի փայտից էին պատրաստում, որ ժամանակի ընթացքում չփտեին: Հրեաներն այս փայտը շինությունների համար էին օգտագործում, իսկ Եգիպտոսի ու Ասորեստանի թագավորները՝ նավ շինելու: Ներկա օրերում Լիբանանի մայրի ծառն ու նրա խեժը շատ չգտնվող բան չի, որովհետև կարելի է գտնել և ավելի շատ դեկորատիվ նպատակներով են տնկում, քան թե օգտակարության: Գարնանը ցանում են լավ հասած սերմերը (որովհետև երկու տարի պետք է, որ հասունանան) փափուկ և ավազոտ հողի մեջ. այս սերմերը հաստ կեղև ունեն և դժվար են բացվում, դրա համար փոքր բզով ծակում են կեղևը: Լիբանանի մայրու տերևները կարճ են ու խիտ, և գլխավոր ճյուղերը ուղղահայաց են մեծանում, իսկ կողքիները պառկած կամ հորիզոնական դիրքով տարածվում: Կա կարծիք, ըստ որի այս ճյուղերի վերին ծայրերը միշտ դեպի արևմուտք են նայում, բայց հետագայում գննությամբ ու գիտափորձով բացահայտվեց այս կարծիքի սխալականությունը:

Այն ճանապարհորդները, որ գնում են Արևելք կամ սուրբ երկրները տեսնելու, Լիբանանի մայրիները տեսնելու արժանի բաներից մեկն են համարում: Եվրոպացի նոր ճանապարհորդներից այս մայրիները տեսնողների մեջ երևելի է բանաստեղծ Լամարտինը, որը 1833-ի ապրիլին տեսել է այս անվանի ծառերը:

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

### ՊԼԱՏՈՆ<sup>85</sup>

Եթե հույների առաջին դարը օրենքի ու առաքինության դար կոչվեց, երկրորդը կարելի է քաջության ու փառքի դար ասել, երրորդին զեխությունն ու բռնակալությունը տիրեց նրանց մեջ, իսկ չորրորդին կորցրին իրենց ողջ փառքն ու քաջությունը, միայն շատ զարգացան ու ծաղկեցին արհեստներն ու գիտությունները: Դրա հետևանքով երևելի մարդիկ էլ խիստ շատացան, և նրանց մեջ առաջիններից մեկն էր Պլատոնը:

Այս փիլիսոփան ծնվել է Հունաստանի Էգինա կղզում՝ Քրիստոսից 429 տարի առաջ: Նրա անունը Արիստոկլ էր, բայց ուսուցիչը՝ Սոկրատը, նրան տեսնելով թիկնավետ ու լայն ճակատով, Պլատոն դրեց անունը, որ հունարեն նշանակում է լայնություն: Պատմում են հորինված մի գրույց, ըստ որի, երբ Պլատոնը օրորոցի մեջ էր, մեղուները նրա շրթունքներին մեղր են քսել, և իբր նրա ուսուցիչը երազի մեջ փոքրիկ կարապի կերպարանքով տեսել է Պլատոնին, որի փետուրները փոքր-ինչ երկարելու պես սկսել է անուշ ձայնով երգել ու թռչել:

Պլատոնը բոլոր գիտություններից առաջինը հետևեց բանաստեղծությանն ու երկրաչափությանը: Նրա ոճը վսեմ է, մտքի ծնունդը պայծառ, դատողությունները շատ ճիշտ, սակայն դժբախտաբար, գուցե չհավանելու պատճառով, վաղ հասակում իր գրած ողբերգություններից մի քանիսն այրել է: Ուսուցչի մահից հետո դուրս է գալիս Աթենքից՝ Հունաստանով ճամփորդելու: Որոշ ժամանակ այնուհետև հայտնի ուսուցիչների մոտ է մնում: Հետո մեկնում Իտալիա, գնում է Սիցիլիա՝ Էտնա լեռան հրաբուխը տեսնելու, այնտեղից էլ Եգիպտոս:

Երկար ճամփորդելուց հետո վերադառնում է հայրենիք և քաղաքի պարսպի մոտ՝ ծառերով զարդարված փոքրիկ դպրոց է բացում. ոմանք ասում են, թե այս դպրոցը նրան ժառանգություն էր աթենացի Ակադեմիկոս անունով իշխանից, որտեղից էլ դպրոցի անունը **Ակադեմիա** կոչվեց:

Շատ աշակերտներ ունեցավ Պլատոնը, քառասուն տարվա չափ դաս տվեց ու այդ նույն ժամանակ շատ տրամախոսություններ շարադրեց, որ վսեմ ու խորունկ գրվածքներ են: Ուրիշ շատ գրվածքներ էլ ունի, և միշտ ուրիշի անունից է խոսում. միայն Ֆեդոն կոչված տրամախոսությունը և Սոկրատի ջատագովությունն իր անունից են գրված: Նրա ոճն այնքան գովելի ու հարգի էր հույների մեջ, որ անունը աստվածախոս դրին, ոճն էլ այնքան քաղցր էր, որ հնուց ի վեր ճարտասանության օրինակ է, այս փիլիսոփայով զարմացած ասում է. «Թե որ Արամազդը (Զևսը) կամենար մարդկային լեզվով խոսել, անշուշտ Պլատոնի ոճով կխոսեր»: Պլատոնը չնայած իր գրվածքներով շատ անվանի եղավ, սակայն մի քանի սխալ կարծիքներ էլ ունեցավ: Օրինակ, ասում էր, թե կրակը

---

<sup>85</sup> «Բազմավեպ», թիվ 21, Վենետիկ, 1843, էջ 330-331:

բուրգի պես երկրի վրա թվերերով կախված է, երկրագունդը տասներկու հաստ հնգանկյունի կտորներից է բաղկացած: Ընդունում էր հոգու անմահությունը, բայց հոգեփոխությամբ: Ընդունում էր մեկ ճշմարիտ Աստծուն, բայց մոլորությամբ ասում էր, թե նյութը հավիտենական է:

Շատ երկար կարելի է խոսել Պլատոնի ճիշտ ու սխալ կարծիքների մասին: Հայտնի է, որ նրա պարկեշտությունը, ազնվությունը, քաղցրախոսությունը և ուրիշ կատարելությունները իր հմտության հետ միացած՝ բոլորի համար սիրելի ու պատկառելի դարձրին նրան:

Սակավակեր էր ու շատ զգուշավոր այն բաների մեջ, որ կարող են մարդու մարմինը տկարացնել ու միտքը բթացնել: Այսպես առողջ կյանքով ապրելով ութսունմեկ տարվա մեջ մեռավ իր ծննդյան օրը, և իր հիվանդության վերջին օրերին խելքը գլխին էր, այնպես որ հոգին տալու ժամանակ բարեկամների հետ խոսելիս է եղել: Եթե հավատանք Կիկերոնի հայտնածին, վախճանվել է գրելու ժամանակ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ա) ԳՐՔԵՐ

1. Աբեղյան Մ., Երկեր, Գ, Երևան, 1968
2. Աղայան Ղ., Ընտիր երկեր, Երևան, 1956
3. Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա.Գ.Աբրահամյանի և Գ.Բ.Պետրոսյանի, Երևան, 1979
4. Գիրք Պիտոյից, Աշխատասիրությամբ Գոհար Մուրադյանի, Երևան, 1993
5. Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, Թարգմանությունը Վազգեն Գևորգյանի, Երևան, 2005
6. Դոլուխանյան Ա., Շարլ Ազնավուրը բանաստեղծ, Երևան, 2002
7. Դոլուխանյան Ա., Վիկտոր Լանգլուան հայագետ, Երևան, 2003
8. Դոլուխանյան Ա., Սեն-Մարտենը ֆրանսիական հայագիտության հիմնադիր, Երևան, 2014
9. Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Թարգմանությունը և ծանոթությունները Ե.Տեր-Մինասյանի, Երևան, 1989
10. Կարինյան Ա.Բ., Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, Երևան, 1960
11. Հայ գրականության քրեստոմատիա, Միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի համար, Կազմեց Ա.Շ.Մնացականյանը, Երևան, 1970
12. «Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա», Երևան, 1979
13. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, Երևան, 1981
14. Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, Վենետիկ, 1928
15. Սահակ Պարթև, Կանոնք, (տե՛ս «Սովերք Հայկականք», Վենետիկ, 1853)
16. Սայաթ-Նովա, Հայերեն խաղեր, Վ. Հ. Զարգարյանի աշխատասիրությամբ, Երևան, 2013
17. Ստեփան Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ.IV, Զ-Ֆ, Երևան, 2010
18. А.С.Пушкин, Евгений Онегин, Роман в стихах, Москва, 1981
19. В.В.Вахмистров, Read and speak, Москва, 1973

բ) ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ

1. «Բազմավեպ», Օրագիր բարոյական, բանասիրական, տնտեսական եւ բնական գիտելեաց, թիվ 1, Վենետիկ, 1843
2. «Բազմավեպ», թիվ 2, Վենետիկ, 1843
3. «Բազմավեպ», թիվ 4, Վենետիկ, 1843
4. «Բազմավեպ», թիվ 12, Վենետիկ, 1843
5. «Բազմավեպ», թիվ 21, Վենետիկ, 1843

6. «Բազմավեպ», թիվ 2, Վենետիկ, 1844
7. «Բազմավեպ», թիվ 3, Վենետիկ, 1849
8. «Բազմավեպ», թիվ 17, Վենետիկ, 1849
9. «Բազմավեպ», թիվ 6, Վենետիկ, 1850
10. «Բազմավեպ», թիվ 7, Վենետիկ, 1851
11. «Բազմավեպ», թիվ 10, Վենետիկ, 1852
12. «Բազմավեպ», թիվ 3, Վենետիկ, 1855
13. «Բազմավեպ», թիվ 6, Վենետիկ, 1855
14. «Բազմավեպ», թիվ 3, Վենետիկ, 1858
15. «Բազմավեպ», թիվ 4, Վենետիկ, 1858
16. «Բազմավեպ», թիվ 6, Վենետիկ, 1858
17. «Բազմավեպ», թիվ 7, Վենետիկ, 1858
18. «Բազմավեպ», թիվ 10, Վենետիկ, 1858
19. «Բազմավեպ», թիվ 11, Վենետիկ, 1858
20. «Բազմավեպ», թիվ 5, Վենետիկ, 1859
21. «Բազմավեպ», թիվ 8, Վենետիկ, 1859
22. «Բազմավեպ», թիվ 3, Վենետիկ, 1860
23. «Բազմավեպ», թիվ 2, Վենետիկ, 1861
24. «Բազմավեպ», թիվ 19, Վենետիկ, 1861
25. «Բազմավեպ», թիվ 1, Վենետիկ, 1863

## Բովանդակություն

1. Երկու խոսք -----	3
2. Ներածություն -----	6
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	
3. Մանկավարժական պատվիրանները «Բազմավեպի» առաջին համարներում -----	17
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	
4. Բարոյախոսական հրահանգները «Բազմավեպի» առաջին հատորներում -----	41
5. ՀԱՎԵՎԱԾ -----	66
6. Օգտագործված գրականության ցանկ -----	79